

4422

ԱՐՄԱՏՈՒԵԱՆՆԵՐ «ԱՐԱՒՍ» ՊԱՏՆԱԿԱՆԱԿԱՆ ԶԱՆԳԻՆԵՐ

Ի. ՏՈՒՐԳԵՆԵՎ

# Ա Ա Ե Ա

Թարգմանեց

ԱՂԵՎԱՆՆԻՐ ԺԱՏՈՒՐԵԱՆ

Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ

ՏՊԱՐԱՆ Ի. Ն. ՍՊՈՐԵՆՈՒԿՆԵՐ

1889

891.71

Տ-99

3-1891a

Арм.  
3-1891a

Ի. ՏՈՒՐԳԵՆԵՎ

891.71  
S-99

# Ա Ս Ե Ա

Թարգմանից

ԱԳՆՔՍԱՆԿԻ ԾԱՏՈՒՐԵԱՆ

12003

ИИВ. № 17231

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԿ  
ՏՊԱՐԱՆ Ի. Ն. ՍՎՈՐՈՒՄԻՈՒԳԻ  
1889



Дозволено цензурою. С.-Петербургъ, 15 іюня 1889 года.

44804. սեհ



29511-63 Գ

Типографія И. Н. Скороходова (Надеждинская, 39).

# Ա Ս Ե Ա

(ՏՈՒՐԴԵՆՆԻՒՑ)

Նոյն օր. Սոֆյա Վ...ն

Ա.

Այն ժամանակ ես քսանեւհինգ տարեկան էի,—սկսեց Ն. Ն.,—և, ինչպէս տեսնում էք, պատմութիւնս անցած—գնացած օրերի բան է: Փակ կեանքիցս ազատուելուն պէս, ես ճանապարհ ընկայ դէպի արտասահման, բայց ոչ այն նպատակով որ «ուսումն աւարտեն», ինչպէս որ այդ ընդունուած էր այն ժամանակ ասել, — ոչ, ես ուզում էի հէնց այնպէս գնալ, աշխարհ տեսնել, աչք բանալ, մարդ ճանաչել: Աս երիտասարդ էի, առողջ և ուրախ. զրպանումս փողն անպակաս էր: Վեռ ոչ մի հոգս, ոչ մի կարիք իմ սիրար չէր ճնշել: Աս ապրում էի, առանց մտածելու. անում էի այն, ինչ որ քէֆս տալիս էր,—մի խօսքով՝ ես ծաղկում, փթթում էի: Այն ժամանակ մտքովս անգամ չէր անցնում, որ մարդս բոյս չէ և որ նա երկար ծաղկել չէ կարող: Երիտասարդական տարիները որ կան՝ ոսկեզօծ շաքարահացեր են և այդ հասակում մարդ կարծում է թէ հէնց դրանք են իսկական, հանապազօրեայ հացը, սակայն հասնում է և այն ժամը, երբ նա քաղցած՝ սկսում է հաց մուրաբ: Բայց ինչ հարկաւոր է այդ մասին խօսել:

Աս ճանապարհորդում էի առանց որ և է նպատակի, առանց մի որոշ ծրագրի: Աննդ էի առնում ամեն տեղ, ուր միայն ինձ հաճելի էր թուում, բայց և իսկոյն շարունակում էի առաջ գնալ, երբ ցանկութիւն էի զգում նոր-նոր մարդիկ տեսնելու, այո, նոր մարդիկ, որովհետև ինձ հետաքրքրում էին բացառապէս մարդիկ, միմիայն մարդիկ: Աս առում էի հետաքրքրաշարժ արձանները, նշանաւոր կաճառները, սպասաւորի

լով տեսքն անգամ իմ մէջ յարուցանում էր թախիժ և դայ-  
րոյթ: Այնպէս որ քիչ քնաց Մրեզգէնի «Մրինէ Պեվեղըէ» հիւ-  
րանոցում խելագարուեմ: Բնութիւնն ինձ վերայ չափազանց  
ազդեցութիւն էր ունենում: Բայց ես չէի սիրում նրա, այսպէս  
ասած, առանձին հրաշալեքները, արտասովոր լեռները, ժայ-  
ռերը, ջրվէժները: Աս չէի սիրում, երբ նա սկսում էր ինձ  
կաշկանդել իմ միտքը խճճել: Բայց այդ բոլորի փոխարէն,  
ինձ հրապուրում էին մարդիկ, նրանց կենդանի կերպարանք-  
ները, նրանց խօսքն ու զրոյցը, նրանց ծիծաղն ու շարժունք-  
ները—և զրկուել այդ բոլորից, համբերել զիմանալ առանց  
այդ ամենը տեսնելու, ես ոչ մի բոպէ չէի կարող: Խուռն  
բազմութեան մէջ ես միշտ մի տեսակ առանձին զուարճու-  
թիւն ու թեթևութիւն էի զգում: Ինձ համար ուրախալի էր  
գնալ այնտեղ, ուր ուրիշներն էին գնում, աղաղակել, երբ ուրիշ-  
ներն էին աղաղակում, և միևնոյն ժամանակ ես սիրում էի  
նայել թէ այդ ուրիշներն ինչպէս են աղաղակում: Մարդ-  
կանց գննել—քննելը ինձ խիստ էր զրաւում, թէպէտ իսկապէս  
ես նրանց ոչ թէ գննում կամ քննում էի, այլ մի տեսակ  
խնդալից և անկուշտ հետաքրքրութեամբ նայում էի նրան-  
ցից ամեն մէկի վերայ: Բայց ես դարձեալ շեղվում եմ իմ  
պատմութիւնից:

Այդպէս ուրեմն, սրանից քսանեւհինգ տարի առաջ ես ապրում  
էի Ռէյն գետի եզրքին զանուող գերմանական փոքրիկ Օ.  
քաղաքում: Աս առանձնութիւն էի փնտռում, որովհետեւ շատ  
ժամանակ չէր, որ սիրտս խոցել էր մի ջահել որբւայրի, որի  
հետ ես տաք ջրերում ծանօթացայ: Աս շատ գեղեցիկ էր  
և խելօք. աշխատում էր դուր գալ ամենքին, նոյնպէս և ինձ՝  
մեղաւորիս, և սկզբում մինչև անգամ ինձ քաջալերում, յոյս  
էր տալիս, բայց յետոյ նա անգթաբար խայթեց սիրտս, զոհե-  
լով իմ սէրը մի բաւարացի կարմրաթշիկ լէյտնանտի: Ճշ-  
մարիտը խոստովանած, սրտիս վէրքն այնքան էլ խոր չէր,  
բայց և այնպէս ես անհրաժեշտ համարեցի անձնատուր լինել  
վշտի ու միայնութեան և բնակուեցայ Օ.—ում: Ինչով ասես  
ջահելութիւնը չի մխիթարվում:

Այդ քաղաքն ինձ դուր եկաւ իւր տեղի զիրքով—նա  
գտնվում էր երկու բարձր բլուրների լանջերում. նա հրապու-

րեց ինձ իւր հին, զառամեալ պատնէշներով ու աշտարակնե-  
րով, իւր դարաւոր կահղիններով, Ռէյնը թափուող պայծառ  
գետակի վերայ ձգուած ոլորապիրկ կամուրջով և, գլխաւորա-  
պէս, իւր անուշ գինիով: Նրա նեղ փողոցներում երեկոյեան-  
ները, արևը մայր մտնելուն պէս՝ (պատմածս յունիս ամսուայ  
քան է) զբօսնելու էին դուրս գալիս չքնաղ շեկահեր գերմա-  
նուհիւներ և հանդիպելով օտարերկրացիներին՝ դուրեկան ձայ-  
նով արտասանում էին «Guten Abend». Իսկ նրանցից ոմանք եր-  
կար ժամանակ փողոցներից չէին հեռանում, մինչև որ լուսի-  
նը իւր պայծառ դէմքը դուրս էր հանում կիսահագած տների  
սրածայր տանիքների ետեից և մայթի մանր քարերը պարզ  
նկարվում էին նրա անշարժ ճառագայթների մէջ: Աս սիրում  
էի այդ ժամին թափառել քաղաքում: Լուսինը յստակ երկ-  
նակամարից, ասես, անդուլ հայեացքով նայում էր քաղաքին  
և քաղաքն զգալով այդ հայեացքը՝ յուշե՛կ ու խաղաղ էր՝  
ոտքից ցղլուէս պայծառացած նրա անվզով և միևնոյն ժա-  
մանակ հոգին մեղմ կերպով ալեկոծող լուսով: Պոթական  
բարձր զանգակատան վերայ դալկացած ոսկի գոյնով պսպղում  
էր աքաղաղը. նոյն ոսկեփայլով իրար էին խառնվում և կո-  
հակները գետակի մթաղոյն խաւի վերայ: Բարակ մոմերը  
(գերմանացին ժուժկալ է) համեստ կերպով պայլում էին շեր-  
տաքար տանիքների տակ, նեղ լուսամտաներում: Խաղողի որ-  
թերը քարաչէն պատնէշներից ծածկաբար դուրս էին ցցել  
իրենց ոլորուն բեղերը: Առանկիւնի հրապարակի վերայ զրտ-  
նուող ջրհորի մօտից մի ինչ-որ արագ վագելով սլանում, անց-  
նում էր ստուերի միջով և յանկարծ հնչվում էր զիշերապահի  
թմրալից սուլոցը: Բարեսիրտ շունը կիսաձայն մոմուում էր.  
խակ օղը, օղը հօ այնպէս էր շոյում ու փաղաքշում մարդու  
կրեսը, կահղիններն այնպիսի մի անուշահատութիւն էին բուրում,  
որ կուրծքն ակամայից սկսում էր բարձր ու ցածր անել և  
շնչե՛լ շնչե՛լ անվերջ:

Օ. քաղաքը Ռէյնից երկու վերստ հեռու էր գտնվում:  
Աս յաճախ գնում էի նայելու այդ մեծաշուք գետին և միշտ  
մի տեսակ առանձին փափագով մտածելով նենգամիտ որբւայրուս  
մասին՝ երկար ժամեր մնում էի նստած մենաւոր և վեթխարի  
հացածառի տակ գտնուող քարէ նստարանի վերայ:

\*

2011

Նրա ճիւղերի միջից, համարեա մանկական դէմքով, տը-  
խուր նայում էր Մագոննայի փոքրիկ անդրին, որի կրծքի  
վերայ քանդակուած էր սրերով խոցուած մի կարմիր սիրտ:  
Միմացի եզերքում գտնվում էր Վ. քաղաքը, որը փոքր ինչ  
մեծ էր իմ բնակած քաղաքից:

Մի անգամ երեկոյեան դէմ ես նստած էի իմ սիրած  
նստարանի վերայ և մերթ գետին էի նայում, մերթ երկնքին,  
մերթ էլ խաղողի այգեստանին: Իմ առջև, եզերքը հանուած  
և փորնիվայր գետին ընկած նաւակի շուրջը վիտուում, թուշ-  
կոտում էին կայտառ, սպիտակազրուխ մանուկներ: Փոքրիկ  
առաքաստանակերը կիսով չափ ուռցրած իրենց առաքաստ-  
ները, մեղմ ու հանդարտ սահում էին. իսկ կապտափայլ ա-  
լիքները հազիւ հազ փքուելով ու վշշալով՝ սլանում էին նրանց  
մօտով: Յանկարծ ես լսեցի երաժշտութեան ձայներ: Ականջ  
դրի: Վ. քաղաքում վալ՝ս էին ածում: Սօնորբասը զօղանջում  
էր՝ ստէպ ստէպ ընդմիջուելով, ջուլթակն անորոշ կլկլոց էր  
բարձրացնում, իսկ եզեզնասրինգը սուլում էր ուժգին ու հա-  
մարձակ:

— Այս ի՞նչ է, հարցրի ես ինձ մօտեցած ծերունուն, որը  
հագած ունէր հասարակ թաւշեայ բաձկոնակ, կապոյտ գուր-  
պաներ և կապերաւոր մուձակներ:

— Այդ ուսանողներն են, — պատասխանեց նա, առաջ դեռ  
ծխամորձի ծայրը բերանի մի անկիւնից միւս անկիւնը տանե-  
լով. — նրանք Վ. — ից եկել են հանդիսին մասնակցելու:

Մի գնամ տեսնեմ, ի՞նչ բան է այդ հանդէսը, — մտածեցի  
ինքս ինձ, — ի դէպս Վ. էլ կը տեսնեմ, այնտեղ դեռ չեմ եղած»:

Աս մի մակուկավար վարձեցի և ճանապարհուեցայ միւս  
ափը:

Բ.

Գուցէ շատերն իսկի չգիտեն էր թէ ի՞նչ բան է այդ հան-  
դէսը: Դա մի տեսակ փառաւոր խնջոյք է, որտեղ միախմբվում  
են համակուսակից կամ համասերկրացի ուսանողներ: Հանդի-  
սին մասնակցող համարեա բոլոր ուսանողները հազած են ունե-  
նում արդէն հնուց սահմանուած գերմանական ուսանողների

հազուստը, այն է՝ կարճ բաձկոններ, մեծ-մեծ կոշիկներ և փոք-  
րիկ գլխարկներ՝ շուրջը յայտնի դոյների ծղիկներ կարած: Ու-  
սանողները սովորաբար հաւաքվում են ճաշին, որոնց նախա-  
գահում է սենիորան, և մինչև առաւօտ մի գլուխ քէֆ են  
անում, երգեր են կրգում, Landevater, Gaudeamus, խմում են,  
ծխում են և կշտամբում ագէտներին ու տխմարներին: Նրանք  
երբեմն նուազածու խումբ էլ են հրաւիրում:

Հէնց այդպիսի մի հանդէս էր կատարվում և՛ Վ. քաղա-  
քում, Արեգախ անունով մի փոքրիկ հիւրանոցի առջև, այգու  
մէջ, որի դուռը նայում էր դէպի փողոց: Թէ՛ հիւրանոցի  
ճակատին և թէ՛ այգու ծառերի վերայ ծածանվում էին զբօշակ-  
ներ: Ուսանողները շարուած էին սեղանների շուրջ, կօտած  
կակղիների տակ: Սեղաններից մէկի տակ շնթուած պարկած էր  
ահագին, լայնադունչ շունը: Իսկ մի կողմում, կանաչապատ հո-  
վանոցի մէջ խմբուած էին երաժիշտները, որոնք գարեջրով  
անընդհատ կազուրկելով իրենց՝ եռանդաղին նուազում էին:  
Փողոցում, այգու ցածր ցանկապատի առջև հաւաքուել էր  
բաւականին մեծ բազմութիւն: Վ. քաղաքի բարեսիրտ բնակիչ-  
ները կամենալով օգուտ քաղել դէպքից, սիրով նայում էին  
իրենց քաղաքում հիւրընկալող ուսանողներին: Աս էլ խառ-  
նուեցայ հանդիսաաես ամբօխի հետ: Հրձուանքով նայում էի  
ուսանողների երեսներին: Նրանց զրկխառնութիւնները, բա-  
ցականչութիւնները, օրիորդներին դուր գալու երիտասարդա-  
կան անմեղ հաճոյքը, այրեցող հայեացքները, անտուխ ծի-  
ծաղը (ամենաքաղցր ծիծաղն աշխարհիս երեսին) — նրանց  
թարմ, պատանեկական կեանքի այդ խնդալից եռացումը, այդ  
ուժգին, անդսպելի յառաջխաղաղացութիւնը — յառաջխաղա-  
ղացութիւն դէպի որ կողմն ուզում է լինի, միայն թէ յառաջ-  
խաղաղացութիւն, — մի խօսքով այդ բարի և խնդալից կենցաղը  
սիրտս շարժում, բորբորոքում էր: Ի՞նչու ես էլ չգնամ նրանց  
մօտ, — մի քանի անգամ հարցրի ինքս ինձ...

— Ետեա, բաւական չէ, — յանկարծ իմ ետես ուուսերէն  
արտասանեց մի տղամարդի ձայն:

— Ի՛նչ սպասեմք, — նոյն լեզուով պատասխանեց մի ու-  
րիշ կանացի ձայն:

Աս շտապով շուռ եկայ... Իմ հայեացքն ընկաւ մի գեղեց-

կատեսիլ երիտասարդի վերայ: Նա թե-թեի տուած՝ կանգնած էր մի ոչ այնքան բարձրահասակ աղջկայ Հեա, որի յարգեայ գլխարկն ամբողջապէս ծածկում էր նրա դէմքի վերին մասը:

— Ղուբ ոուս էք, սկամայ դուրս թուա իմ բերանից: Երիտասարդը ժպտաց և ասաց.

— Եյո՛, ոուս ենք:

— Նս ամենեկին չէի սպասում... այսպիսի մի խուլ, յետ ընկած տեղում... սկսեցի ես...

— Մենք էլ չէինք սպասում,— ընդհատեց նա,— բայց ի՞նչ փոյթ, աւելի լաւ: Թոյլ տուէք ինձ ծանօթանալ ձեզ Հեա. իմ անունը Պազին է, իսկ ահա սա... նա մի վայրկեան խօսքը կտրեց— իմ քոյրն է: Բայց ձեր անունը, խնդրեմ:

Նս յայտնեցի իմ անունը և մեր մէջ սկսուեց խօսակցութիւն: Նս իմացայ, որ Պազինը էլ ինձ նման ճանապարհորդելով միմիայն իւր զուարճութեան համար, մի շաբաթ առաջ եկել էր Ն. քաղաքը և Հէնց այնտեղ էլ մնացել: Երան ասած, ես արտասահմանում խիստ անսխորժանօք էի ծանօթանում ուսանելի Հեա: Նս նրանց ճանաչում էի մինչև անգամ Հեուելից՝ տեսնելով նրանց քայլուածքը, հագուստի ձևը, և, գլխաւորապէս, նրանց դէմքի արտայայտութիւնը: Եյո՛ ինքնաբաւական, արհամարող, իսկ յաճախ հրամայողական դէմքը յանկարծ ստանում էր զգոյշ և երկչոտ արտայայտութիւն... Տեսնում էիր այդ կերպարանքը մի ակնթարթում ամբողջապէս դիտողութեան փոխուեց. աչքն անհանդիստ թափառում է...

«Մայ, Տէր Եստուած, արդեօք որ և է սուա խօ շասնցի, ինձ վերայ խօ չն՛ն ծիծաղում», կարծես, ասում էր այդ շտապեցրած հայեացքը... Անցնում էր վայրկեան— և նորից վերականգնում էր դէմքի նախկին վսեմութիւնը, որին երբեմնապէս յաջորդում էր բթահայեաց տարակուսանք: Եյո՛, ես խոյս էի տալիս ուսանելի Հեա ծանօթանալուց. բայց Պազինն ինձ դուր եկաւ Հէնց առաջին հայեացքից: Սան այնպիսի կերպարանքներ, որոնց վերայ նայելն ամենքին էլ հաճելի է թուում, կարծես թէ նրանք տաքացնում կամ շոյում են մարդուն: Պազինի կերպարանքն էլ Հէնց այդպէս էր, — քաղցրահամ, փաղաքշական, մեծ-մեծ, քնքո՛ւ աչքերով և փափո՛ւկ դանդուր մազերով: Նա այնպէս էր խօսում, որ դուք մինչև անգամ

առանց նրա երեսը տեսնելու, Հէնց միմիայն ձայնի հնչումից զգում էիք, որ նա ժպտում է:

Աղջիկը նոյնպէս, որին նա իւր քոյրն անուանեց, Հէնց առաջին հայեացքից ինձ խիստ համակրելի և քաղցրատես երևաց: Նրա սևերակ փայլուն աչերով, փոքրիկ, բարակ քթով և համարեա մանկական թշկնեքով, թուի ու կլորիկ դէմքի ներդաշնակութեան մէջ աչքի էր ընկնում մի ինչ-որ առանձի՛ն, մի ինչ-որ ինքնուրոյն և հրապուրիչ ոյժ ու զօրութիւն, որ իսկոյն դաւում էր նրա վերայ նայողին: Նրա կազմուածքը շնորհաշուք և վայելուչ էր, բայց կարծես դեռ ոչ կատարելապէս աճած ու զօրացած: Նա ամենեկին չէր նմանվում իւր եղբօրը:

— Ար կամենա՞ք մտնել մեզ մօտ, ասաց ինձ Պազինը,— կարծեմ, բաւական է, որքան մենք նայեցինք այս գերմանացիներին: Ե՛, մերոնք որ լինէին, խօ մինչև այժմ բոլոր ապակիներն ու աթոռները կտարատած կը լինէին, բայց սրանք արդէն չափից դուրս համեստ են: Ի՞նչ ես կարծում, Եսեա՛, դնա՛նք սուն թէ ոչ:

Աղջիկը հաստատական կերպով զուլը շարժեց:

— Մենք ապրում ենք քաղաքից դուրս, — շարունակեց Պազինը— խաղողի այգեստանում, մի փոքրիկ մենաւոր տան մէջ, որ դանվում է բարձրաւանդակի վերայ: Վեղեցիկ և փառաւոր է այդ տեղը. գնանք, տեսէք: Տանտիկինը խոստացել է մեզ համար մածուն պատրաստել: Եհա ուր որ է կը մթնի էլ և ձեզ համար աւելի հաճելի կլինի լուսնեակ զիշերով անցնել Բէյնը:

Մենք ճանապարհ ընկանք: Վաղաքի ցածր դարպասից անցնելով (քաղաքը ամեն կողմից շրջապատուած էր կապիճեայ Հինաւուրց պարիսպով, մինչև անգամ դեռ շատ պատերազմական մարտիոցներ կանգուն էին մնացած) մենք դուրս եկանք դաշտ և քարաշէն պարսպի երկայնութեամբ քսան քայլ առաջ գնալուց յետոյ՝ կանգ առանք մի նեղ դռնակի առջև: Պազինը բացեց նրան և մի ոլորապտոյտ շաւղով տարաւ մեզ դէպի վեր: Եաւզի երկու կողմերում, աստիճանաբար բարձրացող տափարակների վերայ բուսել էր խաղողը: Երևը Հէնց նոր էր խոնարհուել դէպի մուտքը և նրա թափանցիկ վարդակոյն լոյսը դեռ խաղում էր կանաչ որթերի ու երկայն

ձողերի վերայ. նա դեռ լուսաւորում էր մանր ու խոշոր սա-  
լաքարերով ծայրէ ի ծայր սալած չոր գետինը և մի փոք-  
րիկ տնակի սև, թեքաղիր գերաններով ու չորս լուսաւոր  
պատուհաններով սպիտակ պատը, որ կանգնած էր սարի հէնց  
գաղաթին: Մենք բարձրանում էինք դէպի այդ տնակը:

— Ահա և մեր կացարանը, բացականչեց Պագինը, երբ  
սկսեցինք մօտենալ տնակին: — Ահա և տանտիկինը, տեսէք,  
նա կաթ է բերում: Guten Abend, Madame (բարի երեկոյ, տիկին):  
Մենք այս ընդհանուր հացի կնեսենք. բայց առաջ մի լաւ դի-  
տեցէք ձեր շուրջը, աւելացրեց նա՝ — տեսնում էք, որպիսի  
տեսարան է:

Տեսարանն, իրաւ որ, հրաշալի էր: Մեր առջև ձգուած էր  
կանաչապատ ավերի միջով հոտող արծաթափայլ Րէյնը: Մի  
տեղ նա փայլում էր մայր մտնող արևի կարմրավառ ճառագայթ-  
ների տակ: Աղբիւրին ապաստանած փոքրիկ քաղաքը երևան էր  
հանում իւր բոլոր տներն ու փողոցները: Այնպիսի սփռուած  
էին բլուրներն ու դաշտերը: Սերքեում լաւ էր, բայց աւելի  
ևս լաւ էր վերեւումը: Ինչ առաւելապէս ապշեցրեց երկնքի  
անհունութիւնն ու յստակութիւնը և օդի թափանցիկութիւնը  
ու պայծառութիւնը: Սա, այդ թարմ և թեթեւ օդը մեզմ  
ծփում էր և միմեանց ետեւից գլորում իւր ալիքները, կարծես  
նա էլ իրեն աւելի ազատ և աւելի ուրախ էր զգում այնտեղ,  
վերեւում, անհուն բարձրութեան մէջ:

— Շատ գեղեցիկ բնակարան էք ընտրել, ասացի ես:

— Այդ Ասեայի գիւտն է, պատասխանեց Պագինը: —  
Պէ, Ասեան, շարունակեց նա, — կարգադրութիւններ արա,  
տեսնենք: Պատուիրիր, որ ամեն ինչ այստեղ բերեն: Մենք  
կրնթրենք դուրսը, բաց օդում, հէնց այստեղ: Այստեղից աւելի  
լաւ է լսվում հրաժշտութեան ձայնը: Վուր իսկի նկատել էք,  
աւելացրեց նա, գառնալով ինձ, — որ շատ անգամ որևէ վալ-  
սին մօտիկից լսելը կողկիլ արժէք չի ունենում — ձեր ական-  
ջին դիպչում են միայն հասարակ և կոշտ-կոպիտ ձայներ, այն  
ինչ, երբ դուք նոյն վալսը հնուրիցն էք լսում, նա ձեզ հրա-  
շալի է թուում և շարժում է ձեր սրտի բոլոր բովանդակական  
լարերը:

Ասեան (նրա իսկական անունն Աննա էր, բայց Պագինը

նրան Ասեա էր անուանում, ուրեմն թողլ առէք և ինձ նրան  
այդպէս կոչել), Ասեան դիմեց դէպի սենեակի դուռը և շուտով  
դարձեալ տանտիկնոջ հետ միասին վերադարձաւ: Նրանք եր-  
կուսով բերում էին մի մեծ մատուցարան, որի վերայ դարսո-  
տած էին կովկիթով կաթ, ափսեներ, դալներ, շաքար, մրգեղէն  
և հաց: Մենք նստեցինք ընթրելու: Ասեան գլխարկը վերց-  
րեց: Նրա սև մազերը, որոնք խուզուած ու սանրած էին,  
ինչպէս տղայի մազեր, մեծ-մեծ հիւսուածքներով թափվում  
էին պարանոցի և ականջների վերայ: Սկզբում նա ինձանկից  
քաշվում էր, բայց Պագինն ասաց նրան.

— Ասեան, բաւական է կուչ գաս, սա կծոտող չէ:

Սա ժպտաց, իսկ մի փոքր ժամանակից յետոյ արդէն՝ ինքն  
սկսեց խօսել ինձ հետ: Սա այդ աղջկանից աւելի կենդանի և  
դիւրաշարժ արարած չէի տեսած: Սա ոչ մի վայրկեան հան-  
գարտ չէր նստում. վեր էր կենում, ներս էր վազում սենեակը  
նորից դուրս էր վազում, մօտենում էր մեզ, կիսաձայն եր-  
գում էր, ստեպ-ստեպ ծիծաղում էր և այն էլ շատ տարօրի-  
նակ կերպով՝ կարծես թէ նա ծիծաղում էր ոչ թէ իւր լած-  
ների մասին, այլ այն զանազան մտքերից դրդուած, որոնք  
ծնվում էին նրա գլխում: Նրա խոշոր աչքերը նայում էին  
ուղիղ, պայծառ և համարձակ, միայն երբեմն նրա աչքի կո-  
պերը թեթեւ կերպով կկոցվում էին և այդպիսի ընդհանրում  
նրա հայեացքն յանկարծակի փոխվում էր. նա խորիմաստ և  
քնքուջ արասյայտութիւն էր ստանում:

Մենք երկու ժամի չափ խօսեցինք: Յերեկը վաղուց չքա-  
ցել էր և երեկոն, որ սկզբում այնպէս բոցավառ էր, յետոյ  
պայծառ և ծիրանագոյն, յետոյ դալկացած ու պղտոր, մեզմ  
հալում էր և հանդարտ փոխակերպվում դիշերային խաւարի:  
Իսկ մեր խօսակցութիւնը, մեզ շքապատող օդի պէս խաղաղ  
և հեղահամբոյր խօսակցութիւնը, դեռ շարունակվում էր: Պա-  
գինը պատուիրեց մի շեշ րէյնվէյն բերել: Մենք, առանց  
շտապելու, կամոց կամոց շեշը դատարկեցինք: Արաժշտութեան  
ձայնն առաջուայ նման դարձեալ հասնում էր մեր ականջին. նրա  
հնչիւններն աւելի քաղցր և աւելի քնքուշ էին թուում: Պագա-  
բում և գետի վերայ հեղահեղ սկսում էին ճրագները վա-  
ռուել: Ասեան յանկարծ գլուխը կախեց, այնպէս որ նրա գան-

գուրնները թափուեցան աչքերի վերայ. նա լուեց և հառաչեց. իսկ յետոյ յայտնեց, որ քնել է ուզում և վերկացաւ գնաց սենեակը: Սակայն ես նկատեցի, թէ ինչպէս նա, առանց ճրագը վառելու, երկար ժամանակ կանգնած էր բաց պատուհանի ետեւը: Վերջապէս լուսինը դուրս լողաց և սիսեց կաքաւել Բէյնի մակերևոյթի վերայ: Ամեն ինչ լուսաւորուեց, մթադուռուեց և կերպարանափոխուեցաւ: Մեր բաղմանկիւն բաժակներում լրցուած զինին անգամ պլպլաց մի տեսակ խորհրդաւոր փայլով: Բամին դադարեց, կարծես թէ երբ ծալեց, և մարեց: Պեանից մեզմ կերպով բուրեց զիշերային անուշահոտ ջերմութիւնը:

— Պնայու ժամանակ է, բացականչեցի ես, — թէ չէ, ով զիտէ, յետոյ մակուկավար չը ճարեմ:

— Այո՛, ժամանակ է, կրկնեց Պագինը:

Մենք նեղ շաւղով իջանք ներքև: Յանկարծ մեր ետեւից քարեր գլորուեցին. այդ Ասեան էր. նա շտապում էր մեզ հասնելու:

— Մի՛թէ դու դեռ չես քնել, հարցրեց կղբայրը: Բայց Ասեան առանց մի խօսք պատասխանելու նրան՝ վազելով անցաւ մեր մօտով: Հրախաղութեան վերջին մարող ճրագները, որոնց վառել էին ուսանողները հիւրանոցի այգում, ներքևից լուսաւորում էին ծառերի տերևները և՛ հանդիսաւոր ու ֆանտաստիկական տեսք էին տալիս նրանց: Մենք Ասեային դտանք արի մօտ: Նա խօսում էր մակուկավարի հետ: Մնաք բարեաւ ասելով իմ նոր բարեկամներին ես թուայ մակոյկը: Պագին խոստացաւ հետեւեալ օրը այցելել ինձ: Աս սեղմեցի նրա ձեռքը, իսկ իմ ձեռքը պարզեցի Ասեային. սակայց նա միայն նայեց ինձ վերայ և գլուխը շարժեց: Մակոյկը հեռացաւ արձիւնից և արագընթաց սահեց դետի վրայով: Մակուկավարը, որ մի կայտառ ծերունի էր, անդիմադրելի ուժով ընկզմում էր թիակները մուսյլ ջրի մէջ:

— Պուք անցաք լուսնայ սիւնը, դուք նրան ձեռքեցիք, — իմ ետեւից կանչեց Ասեան:

Աս աչքերս կախեցի: Մակոյկի շուրջը սեխն տալով՝ ծրփում էին ալեքները:

— Պնաք բարեաւ, դարձեալ հնչուեցաւ նրա ձայնը:

— Յվաղը, — նրա ձայնին հետեւեց Պագինի ձայնը:

Մակոյկը մօտեցաւ եզերքին: Աս դուրս եկայ և նայեցի շուրջս: Պիմացի եզերքում ոչ ոք չէր երևում: Առանկայ սիւնը, որպէս կամուրջ, դարձեալ ձգուած էր ամբողջ դեպի լայնութեամբ: Որպէս հրաժարական ողջոյնի վերջին ձայներ, իմ ականջին դիպան վաղեմի, լաններովեան վալ՝սի հնչիւնները: Պագինն շատ իրաւացի էր ասում — ես զգացի, թէ ինչպէս սրտիս բոլոր լարերը դողացին, կարծես թէ այդ՝ մի ինչոր փնտաղ, մի ինչ-որ պահանջող եղանակներին պատասխան տալ էին ուզում:

Աս միջին դաշտերի միջով, մեզմ ու հանդարտ շնչելով անուշահոտ օդը՝ ճանապարհուեցի դէպի տուն: Աս մտայ սենեակս միանգամայն զգուած ու փայփայուած անառիթ և անվերջ անկալութիւնների քաղցր տառապանքներով: Աս ինձ բաղբաւոր էի զգում... Բայց ի՛նչով էի ես բաղբաւոր: Աս ոչինչ չէի ցանկանում, ես ոչ մի բանի մասին չէի մտածում... Սակայն ես բաղբաւոր էի:

Այդ ակորթալի և դողորիկ զգացմունքներին առատութիւնը շարժեց իմ ծիծաղը և ես հազիւ զսպելով նրան՝ խորը թաղուեցի անկողնի մէջ. բայց հէնց աչքս նոր էի կպցրել, երբ յանկարծ իմ մտքովն անցաւ մի բան, այն է, որ ես ամբողջ երեկոն ոչ մի անգամ չէի մտաբերել իմ քարասիրտ գեղեցկուհուն... «Այս ի՛նչ է նշանակում», հարցրի ինքս ինձ — «միթէ ես էլ սիրահարուած չե՞մ»: Բայց առաջարկելով ինձ այդ հարցը՝ ես, կարծեմ, իսկոյն և եթ քնեցի, որպէս մանուկն օրօրոցում:

Ք.

Առաւօտեան (եւ արդէն զարթել էի, բայց չէի վեր կենում) պատուհանիս տակ լսելի եղաւ թխթխոց և մի ձայն, որն՝ ես իսկոյն Պագինի ձայնի տեղ ընդունեցի, երգեց.

«Քնած ես դու արդեօք, ես կիթառով  
Քեզ կը զարթեցնեմ...»

Աս շտապեցի դուռը բաց անել:  
— Ողջոյն ձեզ, սասց Պագինը, ներս մտնելով, — ես ձեզ

փոքր ինչ վաղ եմ անհանգստացնում, բայց, հոգ չէ, նայեցէք, որպիսի առաւօտ է: Թարմութիւն, ցօղ, արտուաները երգում են...

Նա իւր գանգուր և պսպղուն մազերով, իւր բաց պարանոցով և վարդագոյն այտերով նոյնքան թարմ էր, որքան և առաւօտը:

Եւ հաղնուեցայ: Մենք դուրս եկանք պարտէզ, նստեցինք փոքրիկ նստարանի վերայ, պատուիրեցինք սուրճ բերել և սխտեցինք զրոյց անել: Վազինը հաղորդեց ինձ, թէ ինչ-ինչ ծրագրներ էր կազմել իւր ապագայի մասին: Բաւականին մեծ հարստութեան աէր լինելով և ոչ ոքից կախում չունենալով՝ նա կամենում էր իրեն նուիրել նկարչական արուեստին, միայն ցաւում էր, որ ուշ էր խելքի եկել և իզուր այնքան ժամանակ էր կորցրել: Եւ նոյնպէս յայտնեցի նրան իմ դիտաւորութիւնները և ի դէպս հաղորդեցի նաև իմ անբաղդ սիրոյս գաղտնիքը: Նա ներողամտութեամբ լսեց ինձ, բայց որքան կարողացայ նկատել, իմ պատմութիւնն այնքան էլ չը շարժեց նրա կարեկցութիւնը: Վաղաքավարութիւնից դրդուած և զխաւորապէս ինձ հետեւելով՝ Վազինը նոյնպէս մի երկու անգամ հառաչեց և ապա առաջարկեց ինձ դնալ իւր մօտ տեսնելու նրա էտիւդները: Եւ իսկոյն համաձայնեցի:

Մենք Նսեային տանը չգտանք: Տանտիկնոջ ասելով, նա գնացել էր դէպի «աւերակները»:

Եւ քաղաքից երկու վերստ հեռաւորութեան վերայ դրտնվում էին Ֆեոդալական ամրոցի մնացորդները:

Վազինը փռեց իմ առջև իւր բոլոր նկարները: Նրա էտիւդներում շատ կեանք և ճշմարտութիւն կար. նրանց մէջ նկատվում էր մի տեսակ լայն և ազատ մտաւարացութիւն, բայց նրանցից և ոչ մինը գեռ աւարտած չէր և ինձ թուաց, թէ նկարչութիւնը սխալ էր կատարուած և ճշտութեան մասին շատ քիչ խնամք տարուած: Եւ նրան յայտնեցի իմ անկեղծ կարծիքը:

— Այո, այո, — վրայ բերեց նա, հառաչելով, — դուք ճշմարիտ էք ասում: Այդ բոլորը շատ տղեղ և անմշակ է: Ինչ արած: Չը սովորեցի, ինչպէս հարկն էր: Իսկ մեր անիծեալ սլաւօնական դատարկակեցութիւնը խօսքի տէք որ միշտ

յաղթող է հանդիսանում: Վանի դեռ տենչալից սրտով մտածում ես որ և է գործի կամ պարապմունքի մասին, թեառաբաժ արծուի պէս սխտում ես սլանալ դէպի վեր, դէպի անհուն եթեր և քեզ թուում է, թէ երկիրը կարող ես տեղից շարժել, բայց հէնց որ բանը հասնում է գործին՝ իսկոյն թուլանում և յոգնում ես:

Եւ կամեցայ քաջալիրել նրան, բայց նա ձեռքը անյոյս կերպով շարժեց և ապա բոլոր նկարներն իրար վերայ դարսելով՝ նետեց նրանց դէպի գահոյքը:

— Թէ որ համբերութիւն կունենամ, խօսինձանից մի բան դուրս կ'գայ—ասաց նա քթի տակ—իսկ եթէ չեմ ունենալ, այն ժամանակ ես էլ տատարկապարտ և մտքով խակ աղնուական անչափահասներից մինը կդառնամ: Իսկ այժմ լաւ կանեք, գնանք Նսեային վնտուելու:

Մենք գնացինք:

Գ.

Վէպի աւերակները տանող ճանապարհը ոլորուելով մի նեղ, անտառապատ հովտի զառ ի վայրով իջնում էր ներքև: Հովտի խորքում վազում էր առուն և վշշալով թռչկոտում քարերի վերայից, կարծես շտապում էր շուտով միախառնուել մեծատարած դեռի հետ, որը հանդարտ փայլատակում էր լեռնային սանդրաձև և խիտ-խիտ ճեղքուածներով ժայռակատարների մնայլ անկիւնազծի ետեւից: Վազինն իմ ուշադրութիւնը դարձրեց մի քանի դեղեցիկ լուսաւորուած տեղերի վերայ: Նրա խօսքերից կարելի էր եզրակացնել, որ խօսողը եթէ ոչ կենդանագրող, գոնէ անշուշտ արուեստագէտ պէտք է լինէր: Շուտով երեւցին աւերակները: Երկ ժայռի հէնց գագաթին բարձրանում էր մի քառանկիւնի աշտարակ, որն ամբողջապէս սևացած էր, և թէպէտ դեռ տակաւին ամուր ու հաստատուն, բայց նրա մէջ տեղում կարծես աչքի էր ընկնում մի ճեղքուած, որ ձգվում էր աշտարակի ամբողջ երկայրութեամբ: Մամուռապատ պարիսպները պինդ կպած էին աշտարակին. տեղ-տեղ պարսպների վերայ ոլորապտոյտ բարձրանում էր վայրի խաղողը: Օռմուռուած ծառերը իրենց ճիւղերը կախ էին

զցել ալևորած մարտիրոսներից և խարխուլ կամարներից: Մի քարքարուտ նեղ շաւիղ տանում էր դէպի դեռ անփնաս մնացած դարպասը: Մենք արդէն մտնեում էինք նրան, երբ յանկարծ մեր առջև առկայծեց մի կանացի կերպարանք. նա արագ վազեց բեկորներից կազմուած կոյտի վերայով և գնաց նստեց պարսպի աստիճաններից մէկի վերայ, ուղղակի անդունդի ծայրին:

— Այդ խօս Ասեան էր, բացականչեց Վազինը — այ ձեզ խելագար աղջիկ:

Մենք դարպասով ներս մտանք. մեր առջև բացուեց մի փոքրիկ բակ, որի կէսը ծածկուած էր եղնջով և վայրի խնձորենիներով: Երաւ որ, պատի վերայ նստած էր Ասեան: Նա երեսը դարձրեց դէպի մեզ, ծիծաղեց, բայց տեղեց չը շարժուեց: Վազինը մատով սպառնաց նրան, իսկ ես իմ կողմից բարձրաձայն կշտամբեցի նրան այդ անզգուշութեան համար:

— Բաւական է, շնջաց ականջիս Վազինը, — կատակներով մի զայրացնէք նրան, թէ չէ դուք Ասեային դեռ լաւ չէք ճանաչում՝ մէկ էլ տեսաք բարձրացաւ աշտարակի ծայրը: Աւելի լաւ է դուք ուշիուշով նայեցէք և զարմացէք այստեղի բնակիչների խելամոռութեան վերայ:

Նս յետ նայեցի. անկիւնում, մի փոքրիկ փայտաշէն ծածքի տակ նստած էր մի պառաւ կին: Նա զուլպայ էր գործում և ակնոցների տակից ծուռ-ծուռ նայում մեզ վերայ: Նա դարեջուր, շքարահացեր և սելտերեան ջուր էր ծախում ճանապարհորդներին: Մենք տեղաւորուեցանք մի փոքրիկ նստարանի վերայ և անաղեայ ծանր բաժակներով սկսեցինք սառը զարեջուր խմել: Ասեան ոտները կուշ ածած շորի տակ և զուլսը փաթաթած նրբաթել, չեքիլայանման շալով՝ անշարժ նստած էր իւր տեղը: Նրա դէմքի զիզաշուք դժաւգրութիւնը վայելուշ և բացորոշ կերպով նկարուած էր պայծառ երկնքի վերայ: Բայց ես անհաշտ զգացմունքով էի նայում Ասեայի վերայ: Նս արդէն նախընթաց օրը նկատեցի նրա մէջ մի ինչ-որ փիւմայ և անբնական վարմունք... «Նա ուզում է զարմացնել մեզ», մտածեցի ես՝ — բայց ի՞նչու համար: Ի՞նչ երկխայութիւն է այդ: Վարձես զուշակերով, թէ ի՞նչ էր անցնում իմ մտքով՝ նա յանկարծ մի թռուցիկ և

սուր հայեացք ձգեց ինձ վերայ, դարձեալ ծիծաղեց, և ապա երկու ոստիւնով պատից թռաւ ներքև ու մտննալով պառաւ կնոջը՝ մի բաժակ ջուր խնդրեց:

— Դու կարծում ես, ինձ համար եմ ուզում, ասաց նա՝ դառնալով եղբորը — ոչ այստեղ պատի վերայ ծաղիկներ են բուսել. նրանց անհրաժեշտ է ջրել:

Վազինը ոչինչ չը պատասխանեց. իսկ Ասեան բաժակը ձեռքին՝ սկսեց ցատկոտել աւերակների պատերի վերայ. նա երբեմն-երբեմն կանգ էր առնում, խոնարհվում և մի զուարճալի վսեմութեամբ բաժակից մի քանի կաթիլ ջուր էր զուլում՝ դետին, որոնք սկսում էին պայծառ կերպով շողջողալ արևի լուսոյ տակ: Նրա շարժմունքները շատ գրաւիչ էին, սակայն նրա վերայ նայելիս՝ առաջուպ նման դարձեալ բարկութիւնս գալիս էր, թէպէտ և ակամայ հրձիվում էի տեսնելով նրա արագաշարժութիւնն ու ճարպիկութիւնը: Մի վտանգաւոր տեղում նա դիտմամբ ճչաց և ապա սկսեց բարձրաձայն ծիծաղել... Բարկութիւնս աւելի սաստկացաւ:

— Այնպէս է մազըցում, կարծես այժ լինի, քթի տակ փնթփնթաց պառաւը, մի վայրկեան ընտհատելով զուլպայ գործելը:

Վերջապէս Ասեան բաժակի ջուրն ամբողջապէս դատարկեց և չարութիւններ անելով ու դէս-դէն օրօրուելով՝ վերագարձաւ մեզ մօտ: Մի տարօրինակ հեղնական ժպիտ թիթե կերպով ցնցում էր նրա յոնքերը, քթածակերը և շրթունքները. իսկ թուխ-թուխ աչքերը կիսա-յանդուզն և կիսա-ուրախ արտայայտութեամբ ձգձգում էին:

— Դուք, ի հարկէ, իմ վարմունքը շատ անվայելուշ էք գտնում, կարծես ասում էր նրա դէմքը՝ — այդ միւկնոյն է, ես դիտեմ, որ դուք ինձ վերայ նայելով՝ հրձիվում էք:

— Վարպետ ես, Ասեան, վարպետ, կիսաձայն արտասանեց Վազինը:

Ասեան յանկարծ կարծես ամաչեց. իւր երկայն թերթերունքները խոնարհեց դետին և, որպէս մեղապարտ, հեղութեամբ նստեց մեր կողքին: Նս այստեղ առաջին անգամ սկսեցի ուշիուշով զննել նրա դէմքը — մի փոփոխական դէմք, որպիսին ես նոր էի տեսնում: Մի քանի վայրկեանից յետոյ, այդ

դէմքը բոլորովին գունատուեց և մի տեսակ կենտրոնացած, համարեա տխուր արտայայտութիւն ստացաւ: Այդ բոլորէն նրա դէմքի դժագրութիւնը ինձ բնականից աւելի խոշոր, աւելի խիստ և հասարակ թուաց: Նա տակաւին հանդարտուեց: Մենք սկսեցինք աւերակների շուրջը պտտուել (Ասեան նոյնպէս հետևում էր մեզ) և զուարճանալ տեսարաններով: Այն ինչ ճաշուայ ժամն արդէն մտակեցի էր: Պագինը հաշիւ տեսնելով պառաւի հետ՝ դարձեալ մի բաժակ դարեջուր պահանջեց և դառնալով դէպի ինձ, դէմքի խորամանկ ծամածռութեամբ բացականչեց.

— Սրտիդ ընտրեալի կենացը:

— Ի՞նչպէս մի՞թէ նա, մի՞թէ դուք, իրաւ, այդպիսի մի ընտրեալ ունէք, — յանկարծ հարցրեց Ասեան:

— Ո՞վ ասես, չունի այդպիսի ընտրեալ, առարկեց Պագինը:

Ասեան մի վայրկեան մտածմունքի մէջ ընկաւ: Նրա դէմքը դարձեալ փոխուեց, այդ դէմքի վերայ դարձեալ յայտնուեցաւ հեզնական ժպիտ: Ահրադարձին նա աւելի էր ծիծաղում ու չարութիւններ անում: Նա ծառից մի երկար ձիւղ, պոկեց իբրև հրացան՝ դրաւ ուսին և զլուխը փաթաթեց նրբաթել շալով: Յիշում եմ, մեզ պատահեցաւ շեկահեր և կոտրատուող անդդեացիների մի բաղմախումբ ընտանիք, նրանք բոլորն էլ իրենց ազակեայ աչքերով սառն ապշուածեամբ նայեցին Ասեային, իսկ սա կարծես նրանց չարացներու համար բարձրաձայն երգեց: Ահրադառնալով տուն՝ նա իսկոյն առանձնացաւ իւր սենեակը և միայն ճաշի ժամանակ դուրս եկաւ այնտեղից: Նա հագել էր ձեռնոցներ, գեղեցիկ հագուստ, և խնամքով սանդղուել էր: Սեղանի մօտ նա իրեն խիստ վայելուչ էր պահում, համարեա նազ դալով, հագիւհամուտ էր անում կերակուրները և ջուրն էլ փոքրիկ բաժակով էր խմում: Պարզ առջև — վայելչասուն և բարեկիրթ օրիորդի դեր: Պագինը նրան չէր խանդարում, երևում էր, որ նա արդէն ընտելացել էր նրա քէֆով նստել-կանգնելուն: Նա միայն երբեմն բարեարտութեամբ նայում էր ինձ վերայ և ուր թեթև կերպով կուչ ածում, կարծես ուզում էր ասել. «Նա երևոյ է ներողամիտ եղէք»: Ի՞նչ որ ճաշը վերջացաւ, Ասեան ոտքի

295/1-67

կանգնեց, զլուխ տուաւ մեզ և զլխարկը ծածկելով՝ հարցրեց Պագինից, կարո՞ղ է արդեօք զնալ Պրաու Լուիզէյի մօտ:


— Օհօ, շատ ժամանակ է այդպէս խելքացել ես որ և առանց իմ թոյլտուութեան տեղ չես ուզում զնալ, բացականչեց նա իւր անփոփոխ, բայց այս անգամ փոքր ինչ յուզուած ձայնով: — Մի՞թէ մեզ հետ մնալը քեզ տխրութիւն է պատճառում:

— Ո՞չ, բայց ես երեկուանից խօստացել եմ արդէն Պրաու Լուիզէյին այսօր զնալ նրա մօտ և բացի այդ, ես կարծում եմ, որ ձեզ համար աւելի լաւ կլինի երկուսով մնալ: Պ. Ն. (նա մատնացոյց արաւ ինձ վերայ) դարձեալ մի բան կը պատմէ քեզ:

Ասեան զնաց:

— Պրաու Լուիզէն, սկսեց Պագինն՝ աշխատելով խոյս տալ իմ հայեացքից, — այստեղի նախկին վաճառապետի կինն է. նա այժմ այրի է, բաւականին բարի պառաւ է, բայց, պէտք է ասած, թեթևտղիկ է: Նա շատ սիրեց Ասեային: Ասեան խիստ սիրում է ստորին դասակարգի հետ ծանօթութիւն հաստատել: Ես նկատած եմ, որ դրա պատճառը միշտ հպարտութիւնն է լինում: Ինչպէս տեսնում էք, նա բաւականին երես առած է, — աւելացրեց նա, փոքր ինչ լուութիւն պահպանելուց յետոյ — բայց ի՞նչ կարող եմ անել: Ես ոչ ոքից ոչինչ պահանջել չեմ կարող, իսկ նրանից խօս — բոլորովին: Ես պարտաւոր եմ նրա հետ ներողամտութեամբ վարուելու:

Ես ձայն չը հանեցի: Պագինը խօսակցութիւնը փոխեց: Որքան աւելի մօտ էի ծանօթանում ես նրա հետ, նոյնքան սիրտս աւելի էր կաշոււմ նրան: Ես նրան շուտով ձանաչեցի: Նա իսկ և իսկ ոռւս մարդ էր, ոռւսական հոգով — ճշմարտասէր, ազնիւ, պարզ, միայն, տարաբաղդաբար, փոքր ինչ դանդաղկոտ, առանց ձգողական ոյժի, առանց ներքին կրակի: Երիտասարդութիւնը նրա մէջ չէր եռում, որպէս աղբիւր, այլ նա փայլում էր մեղմ լուսով: Պագինը շատ խելամիտ և զրաւիչ էր, բայց այնումենայնիւ ես ինձ պատկերացնել չէի կարողանում, թէ ի՞նչ պէտք է դառնար նա, երբ այրական հասակը մանէր: Նկարիչ դառնալ... Ի՞նչ առանց դառն աշխատանքի, առանց երկարատեւ չարչարանքների նկարիչ չեմ



դառնում, իսկ աշխատել, — մտածում էի ես, նայելով նրա թոյլ դժագրութեանը, լսելով նրա դանդաղ խօսակցութիւնը — ոչ դու չես կարող աշխատել, դու չես կարող նեղուել, ճընշուել: Սակայն չը սիրել նրան՝ անհնարին էր. սիրտը, կասես, հէնց ինքն իրեն կպչում էր նրան: Չորս ժամ շարունակ մենք միասին անցկացրինք, երբեմն դահլոյքի վերայ նրստած՝ իրար կողքի երբեմն յամրաքայլ անցողաբար անելով տան առջև — և այդ չորս ժամուկայ մէջ մենք բոլորովին մտերմացանք:

Երևը խոնարհուել էր դէպի մուտքը և արդէն տունն զնալու ժամանակ էր: Ասեան դեռ չէր վերադարձեր:

— Համա նա էլ աղատութիւն է վայելում հա, ասաց Պազինը: — Ուզում էք, ես ձեզ ճանապարհ կ'ձգեմ. մենք ճանապարհին կմանենք Պրատու Լուիզէյի մօտ: Ար հարցնեմ, այնտեղ է Ասեան թէ ոչ. պառաւի տունն այնքան էլ հեռու չէ:

Մենք իջանք քաղաք և ծոռուելով դէպի մի նեղ ու ծոռու փողոց՝ կանգ առանք մի չորս յարկանի տան առջև, որը ըստ լայնութեամբ միայն երկու պատուհանի տարածութիւն ունէր: Երկրորդ յարկն առաջինից աւելի էր դուրս ցցուած դէպի փողոց, իսկ երրորդն ու չորրորդն երկրորդից էլ աւելի: Ամբողջ տունը իւր հին քանդակագործութեամբ, ներքեւի երկու հաստ սիւններով, կղմինտրեայ սրածայր տանիքով և այդ տանիքի վերայ դասնուող՝ կտցի պէս յառաջ պարզուած դռնով, նմանվում էր մի ահագին, սապատաւոր թռչնի:

— Ասեան, գոչեց Պազինը — դու այդտե՞ղ ես:

Երրորդ յարկի լուսաւորուած պատուհանը շրխալով բացուեցաւ և մեզ երևաց Ասեայի փոքրիկ, սեւին տուող զլուերը: Նրա հոտեց ծածուկ նայում էր անատամ և ճամօուած դէմքով պառաւ գերմանուհին:

— Աս այստեղ եմ, ասաց Ասեան, արմունկները զրաւիչ կերպով յենած լուսամտի փեղկին: — Ինձ համար այստեղ լաւ է: Ահա, փերցրու այս, աւելացրեց նա՝ նետելով Պազինին խորդենույ մի փոքրիկ ճիւղ — երևակայիր, թէ ես էլ քո սրտի ընտրեալն եմ:

Պրատու Լուիզէն ծիծաղեց:

— Ա. զնում է, առարկեց Պազինը — և ուզում է մնաս բարեւաւ ասել քեզ:

— Մի՞թէ, բացականչեց Ասեան — դէ որ այդպէս է, այդ ճիւղը տուր նրան, իսկ ես այս բոպէիս կը վերադառնամ:

Նա շտապով փակեց պատուհանը և, կարծեմ, համբուրեց Պրատու Լուիզէյին: Պազինն անխօս դէպի ինձ մեկնեց ճիւղը: Աս նոյնպէս անխօս դրեցի նրան գրպանս և հասնելով մահուկավարների փոխադրատեղին, անցայ միւս կողմը:

Յիշում եմ, ես զնում էի տունն, առանց մի բանի մասին մտածելու, միայն թէ մի տարօրինակ ծանրութիւն ճնշում էր սիրտս: Յանկարծ ինձ ապշեցրեց մի ծանօթ, մի սովորական բայց, Պերմանիայում հազուադիւս բուրմունք:

Աս կանգ առայ և հէնց կողքիս աչքովս ընկաւ կանեփի ծաղիկներով սփռուած մի փոքրիկ մարդ: Նրա անապատական բուրմունքը մի ակնթարթում յիշեցրեց ինձ հայրենիքս և իմ մէջ զարթեցրեց բուռն աննշանք տեսնելու նրան: Աս ուզում էի շնչել Ռուսաստանի օդը, ման գալ ռուսական հողի վերայ:

«Ի՞նչ եմ շնչում ես այստեղ, ի՞նչու եմ թափառում այս օտար երկրում, օտար մարդկանց մէջ» — բացականչեցի ես և այն մեռելային ծանրութիւնը, որ զգում էի սրտիս վերայ, յանկարծ փոխուեցաւ մի դառն և այրող յուզմունքի: Աս հասայ տուն բոլորովին այլ տրամադրութեան մէջ, քան թէ նախընթաց օրը: Աս ինձ համարեա զայրացած էի զգում և երկար ժամանակ չէի կարողանում հանդարտուել: Նոյն իսկ ինձ անհականալի մի սրտնեղութիւն պաշարել էր անձս: Աւերջապէս ես նստեցի և մտաբերելով իմ չարաննեղ որբւայրուն (իմ իւրաքանչիւր օրը ես կնքում էի որբւայրուս մտաբերութեամբ), հանեցի նրա նամակներից մինը: Բայց ես մինչև անգամ չը բացարի նրան: Իմ մտածմունքներն իսկոյն այլ ընթացք ստացան: Աս սկսեցի մտածել... մտածել Ասեայի մասին: Աս յիշեցի, որ Պազինը մեր խօսակցութեան միջոցին ակնարկեց ինձ ինչ-որ դժուարութիւնների մասին, որոնք արդուում էին նրան Ռուսաստան վերադառնալ... «Բայց, արդեօք նա նրա քոյրն է», արտասանեցի ես բարձրաձայն:

Աս հանուեցայ, պարկեցի և աշխատում էի քնով անցնել: Բայց մի ժամից յետոյ, ես դարձեալ նստած էի անկողնումս,

արմունկս յննած բարձին և նորից մտածում էի այդ «քմահաճ և միշտ ակամայ ծիծաղող աղջկայ մասին»:

— «Նա իւր կազմուածքով իսկ և իսկ Վաֆայէի փոքրիկ Պալաթէան է Պարնեղինում», շնչնջում էի ես—«այո՛, և նա Պագինի քոյրը չէ...»

Իսկ որբեայրու նամակը լուսնի ճառագայթների տակ սպիտակին տալով՝ հանդարտ ընկած էր յատակի վերայ:

Ե.

Միւս առաւօտ ես դարձեալ գնացի Լ. քաղաքը: Ես ինձ աշխատում էի հաւատացնել, որ միայն Պագինի հետ տեսնուելու եմ գնում, բայց դադուուկ ինձ քարշում էր դէպի Լ. Ասեային տեսնելու ցանկութիւնը: Ես ուզում էի տեսնել թէ ի՞նչեր կանէր Ասեան, ուզում էի տեսնել, թէ նա այս անգամ էլ այնպիսի «ոյիններ» կը խաղար, ինչպէս նախընթաց օրը: Ես նրանց գտայ հիւրասենեակում՝ միմեանց կողքին նրստած, և տարօրինակ բան — չգիտեմ՝ նրանից արդեօք, որ ես թէ՛ ամբողջ գիշերը և թէ՛ առաւօտեան շատ էի մտածել Ռուսաստանի մասին—Ասեան այդ րօպէին իմ աչքին երեւաց որպէս մի կատարեալ ոռւս աղջիկ, այո՛, մի հասարակ աղջիկ, համարեա նաժիշտ: Նա հազած էր հին շոր և մազերը ականջների ետեր սանդղած՝ անշարժ նստած էր լուսամուտի մօտ. ասդակարի մեքենան առջևը՝ նա ինչ որ կարում էր և այնպէս հեղ ու հանդարտ էր, կարծես իւր կեանքում էլ ուրիշ զբաղմունք չունէր: Նա համարեա ոչինչ չէր խօսում և հանդարտ նայում էր իւր գործին. նրա դէմքի դժերը այնպիսի մի աննշան և պարզ արտայայտութիւն էին ստացել, որ ես ակամայ յիշեցի մեր տանը մեծացած Վատեային և Մաշային: Նմանութիւնը լրացնելու համար, նա սկսեց կիսաձայն երգել «Մայրիկ, աղաւնիկ» երգը: Ես նայում էի նրա փոքրիկ, նազուք և սակաւ ինչ զեղնած դէմքին, յիշում էի իմ երեկուայ ցնորքները և մի ինչ-որ բանի վերայ ցաւում: Եղանակը հրաշալի էր: Պագինը յայտնեց մեզ, որ այսօր ինքը գնալու է բնութիւնից էտիւզներ նկարելու: Ես հարցրի, ար-

դեօք թո՞յլ կտայ և՛ ինձ ուղեկցել իրեն և խօ չե՞մ խանդարիլ նրան:

— Բնդհակառակը, առարկեց նա — դուք ինձ կարող էք լաւ խորհուրդներ տալ:

Նա ծածկեց իւր կողոր á la Van Dyck գլխարկը, հազաւ բլուզը, թղթարկոն առաւ կռան տակ և ճանապարհ ընկաւ: Ես էլ հետեւեցի նրան: Ասեան մնաց տանը. Պագինը հեռանալիս խնդրեց, որ նա հոգ տանէ, որպէս զի սպասը խիստ ջրայի չլինի: Ասեան խօստացաւ մտնել խոհանոց: Պագինը հասնելով ինձ արդէն ծանօթ հովտին՝ նստեց մի քարի վերայ և սկսեց նկարել մի հին, խոռոչաւոր կաղնի, որի ճիւղերը դէս ու դէն էին տարածուած: Ես էլ գիրքը հանելով՝ պառկեցի խոտերի վերայ. բայց ես հազիւ թէ կարողացայ երկու երես կարդալ, իսկ նա միայն թուղթը մրոտեց: Մենք աւելի խօսում ու դատում էնք և իմ կարծիքով, բաւականին նուրբ ու խելացի կերպով. մենք խօսում էինք այն մասին, թէ իսկապէս ի՞նչպէս պէտք է աշխատել, ի՞նչեց պէտք է խոյս տալ, ի՞նչին պէտք է հետեւել և թէ ինչու՞մն է կայանում արուեստագէտի իսկական նշանակութիւնը: Վերջապէս Պագինը յայտնեց, որ «այսօր նա տրամադրուած չէ» և պառկեց կողքիս. այնուհետև մենք սկսեցինք մեր երիտասարդական ազատ ճառախօսութիւնները, այն տաք-տաք, մերթ մտախոհ, մերթ ցնծալից, բայց համարեա միշտ անհասկանալի ճառախօսութիւնները, որոնց մէջ այնպէս սիրով բացվում, ազատութիւն է տալիս իւր լեզուին ոռւս մարդը: Խօսելուց կշտացած և բաւականութեան զգացմունքով լցուած՝ մենք վերագործանք տուն: Մենք սովորականից աւելի ուրախ ու զուարթ էինք, կարծես մի մեծ գործի էինք կատարած կամ մի ցանկալի նպատակի հասած: Ես Ասեային գտայ նոյն դրութեան մէջ, ինչպէս որ նրան թողել էի հեռանալիս: Որքան էլ աշխատում էի հետամուտ լինել, զննել նրա իւրաքանչիւր քայլը, այնուամենայնիւ ես նրա մէջ չէի նկատում ոչ մի նշոյլ ուրիշների դուր գալու ցանկութեան, ոչ մի նշանացոյց զիտմամբ ստանձնած, կեղծ դերակատարութեան: Այս անգամ նրան ոչ մի անբնական վարմունքի համար չէր կարելի կշտամբել:

— Օհօ, ինչպէս խելօքացել է, ասում էր Վազինը՝ — կարծես պաս է պահում ու ապաշխարում:

Երեկոյեան դէմ Սսեան մի քանի անգամ միամտութեամբ յորանջեց և սովորականից վաղ մտաւ իւր սենեակը: Աս ինքս էլ շուտով մնաս բարև ասացի Վազինին և վերադարձայ տուն: Աս էլ ուրիշ ոչ մի բանի մասին չէի մտածում այդ օրը ես անցկացրի պաշարուած զգաստ և արթուն զգացմունքներով: Սակայն, յիշում եմ, որ քնելիս՝ ես ակամայ լսելի ձայնով արտասանեցի.

— Չարմանալի՛ քամէլեօն է այդ աղջիկը— և փոքր ինչ մտածելուց յետոյ՝ աւելացրի— բայց և այնպէս նա Վազինի քոյրը չէ:

9.

Անցաւ ամբողջ երկու շաբաթ: Աս ամենայն օր այցելում էի Վազինին: Սսեան կարծես խորշում էր ինձնից, սակայն նա այլ ևս թոյլ չէր տալիս իրեն կրկնելու և ոչ մինն այն չարութիւններից, որոնք այնչափ զարմացրին ինձ մեր ծանօթութեան առաջին օրերում: Նա կամ բարկացած, կամ յուզուած էր երևում, և միշտ աշխատում էր ծածկել այդ, նա առաջուանից աւելի քիչ էր ծիծաղում: Աս հետաքրքրութեամբ դիտում էի նրա այդ նոր ընթացքը:

Նա բաւականին լաւ խօսում էր զաղիերէն և գերմաներէն, բայց և այնպէս նրա ամեն մի խօսք ու շարժմունքից երևում էր, որ նա մանկական հասակում կանացի խնամքից զուրկ էր եղած, որ նա մի տարօրինակ և արտասովոր դաստիարակութիւն էր ստացած, որը ոչ մի ընդհանուր կապ չունէր Վազինի դաստիարակութեան հետ: Վազինը, չնայելով նրա բլեզին և á la Van Dyck գլխարկին, ոչնչով չէր զանազանվում քնքոյշ, կիսազգուհալ ռուս ազնուականից. այն ինչ Սսեայի մէջ օրիորդին համապատասխանող ոչինչ չէր երևում: Նրա բոլոր շարժմունքներում նկատվում էր մի տեսակ անհանգստութիւն: Այդ փոքրիկ, վայրենացած արարածը դեռ նոր էր պատուաստած այդ գինին դեռ չէր նստել, դեռ նա կի էր գալիս: Բնութեամբ երկչոտ և ամթխած՝ նա զայրանում

էր իւր ամաչկոտութեան վերայ և ամեն ճիգ թափում էր գէթ զօրով ազատ ու համարձակ երևալ և այդ բանը նրան ամեն ժամանակ չէր յաջողվում: Աս մի քանի անգամ հարցուփորձ արի Սսեային նրա Ռուսաստանում վարած կեանքի, նրա անցեալի մասին, բայց նա միշտ անախորժութեամբ էր պատասխանում իմ հարցերին: Սակայն ես իմացայ, որ նա արտասահման գալուց առաջ, երկար ժամանակ զիւղումն էր ապրելիս եղել: Մի անգամ ես նրան պատահեցայ միայնակ նստած, զիրք կարդալիս: Ղլուկը ձեռքերի վերայ խոնարհած և մատները խորը թաղած մազերի մէջ, նա աչքերով ուտում էր զբքի էջերը:

— Բրավօ, բացականչեցի ես մօտենալով, — որքան աշխատասէր էք:

Նա զլուկը վեր բարձրացրեց և խիստ ու ծանրահայեաց նայեց վերաս:

— Դուք կարծում էք ես միայն ծիծաղել գիտեմ, ասաց նա և ուզեցաւ հեռանալ:

Աս նայեցի զբքի վերնագրին. դա մի ինչ-որ Ֆրանսիական վիպասանութիւն էր:

— Բայց ես ձեր ընտրութիւնը գովել չեմ կարող, նկատեցի ես:

— Հապա ինչ կարդալ—բացականչեց նա և զիրքը սեղանի վերայ նետելով՝ աւելացրեց. — աւելի լաւ է գնամ յիմար բաներով զբաղուեմ:

Աւ նա վազեց այգին:

Այդ օրը երեկոյեան ես կարգում էի Վազինին «Հերմանը և Վորոտէան»: Սկզբում Սսեան դէս ու դէն էր վազում, պտոյտներ էր անում մեր չորս բոլորը, յետոյ յանկարծ կանգ առաւ, ականջ դրեց և կամաց-կամաց նստելով կողքիս՝ մինչև վերջ ուշիուշով լսեց ընթերցանութիւնս: Հետեւալ օրը ես դարձեալ չը ճանաչեցի Սսեային, մինչև կարողացայ գլխի ընկնել, որ նա նոյնպէս մաքում դրել էր այնպիսի տնարար և ծանրաբարոյ տանախիկին լինել, որպիսին Վորոտէան էր: Մի խօսքով, Սսեան ինձ համար մի կիսահանելուկ—արարած էր: Աւերին աստիճանի ինքնասէր լինելով՝ նա հրապարում էր ինձ մինչև անգամ այնպիսի բովանդակներին, երբ ես զայրանում էի նրա

վերայ: Մի բանում միայն ես աւելի համոզվում էի, այն է՝ որ նա Պագինի քոյրը չէր: Պագինը նրա հետ վարվում էր ոչ իբրև եղբայր: Նա չափազանց քաղցր, չափազանց ներողամիտ և միևնոյն ժամանակ՝ փոքր ինչ զսպած էր պահում իրեն:

Մի տարօրինակ դիպուած աւելի հաստատեց իմ կասկածանքները:

Մի անգամ, երևիոյեան, մօտենալով խաղողի այգեստանին, որտեղ ապրում էր Պագինը, այգու գոնակը փակ գտայ: Առանց երկար մտածելու, ես մի կերպ հասայ ցանկապատի մի քանտուած տեղին, որն արդէն առաջուց նկատել էի, և այնտեղից թռայ այգին: Յանկապատի այդ քանդուած տեղից ոչ այնքան հեռու, փոքրիկ ճանապարհի մի կողմում գտնվում էր թանթրը՝ վենիներով շքափակած մի հովանոց: Նստարդէն բաւական մօտեցել էի այդ ճանապարհին և հովանոցի հետ մի ուղիղ գծի վերայ էի կանգնել, դեռ մի փոքր էլ անցել էի... երբ յանկարծ իմ ականջին տիպաւ Ասեայի ձայնը և բոլորովին ապշեցրեց ինձ: Նա բոցավառ և արտասուախառն արտասանում էր հեռեւեալ խօսքերը.

— Ո՛չ, ես ոչ ոքին չեմ ուզում սիրել, ո՛չ, ո՛չ, ես միայն քեզ եմ ուզում սիրել, միայն քեզ—և սիրել հանապա՛ղ, յաւերձան:

— Բաւական է, Ասեա՛, հանդարտուիր, ասում էր, Պագինը,—գու գիտես, որ ես քեզ հաւատում եմ:

Այդ ձայները լսվում էին հովանոցից: Նստարդէն երկուսին էլ տեսայ ծառերի ցանցահիւս և ոչ այնքան խիա ճիւղերի միջով: Նրանք ինձ չը նկատեցին:

— Քեզ, միայն քեզ, կրկնեց Ասեան և փարելով Պագինի վզովը՝ ցնցողական հեկեկանքներով սկսեց համբուրել նրան և սեղմել իւր կրծքին:

— Բաւական է, բաւական,—պնդում էր Պագինը՝ ձեռքով թեթեւ կերպով շոյելով նրա մազերը:

Նստարդէն վայրկեան անշարժ մնացի... Յանկարծ ցընցուեցի:—Արդեօք գնա՛լ նրանց մօտ... Ո՛չ, երբէք,—անցաւ մտքովս: Նստապով վերադարձայ դէպի ցանկապատը. մի ակնթարթում թռայ փողոցը և համարեա վազելով՝ հասայ տուն: Նստապում էի, ձեռքերս իրար էի շփում, զարմանում

էի այդ անակնկալ դիպուածի վերայ, որն անսպասելի կերպով վերաստուգեց իմ բոլոր կասկածանքները, սակայն չնայելով այդ ամենին, զգում էի, որ սիրաս սաստիկ դառնացած է: Աւելի՛նչ պէս էլ դիտեն կեղծուելու ձևը, մտածում էի ես: Բայց ի՞նչու կեղծուել, ի՞նչ էր նպատակը: Ի՞նչ կարէք կար ինձ յիմարացնելու: Նստագինից այդ չէի սպասում... Սակայն որչափ զգայուն և սրտաշարժ էր նրանց խօսակցութիւնը:

Է.

Պիշերը ես շատ անհանգիստ էի քնած: Առաւօտեան վաղ վեր կացայ, ճանապարհորդական պարկը կապեցի մէջքիս և յայտնելով տանտիկնոջս, որ նա ինձ գիշերը չը սպասէ, ոտքով ճանապարհ ընկայ դէպի լեռները: Նստապըս ուղղեցի դէպի վեր, հակառակ գետի ընթացքին, որի վերայ գտնվում է Չ. քաղաքը: Այդ լեռները Շան մէջք (Hundsträck) անուանեալ լեռնաշղթայի մասերն են կազմում և հետաքրքիր են երկրաբանական տեսակետից: Նրանք նշանաւոր են, մանաւանդ, իրենց սև երկաթաքարեայ շերտերի յտակութեամբ և կանոնաւորութեամբ: Բայց ես ժամանակ չունէի երկրաբանական հետազօտութիւններով զբաղուելու: Նստարդէն մինչև անգամ հաշիւ տալ չէի կարողանում, թէ ի՛նչ էր կատարվում իմ մէջ: Ինձ համար պարզ և հասկանալի էր միայն մի բան, մի՛ զգացմունք, այն է՝ Պագինին և Ասեային տեսնելու ցանկութիւնը: Նստապում էի ինձ հաւատացնել, որ դէպի նրանց զգացած անակնկալ սառնասրտութեանս միակ պատճառն այն զայրոյթն էր, որ յարուցել էր իմ մէջ նրանց խարդախութիւնը: Ո՞վ էր ստիպում նրանց իրար ազգականներ ձեւանալ: Բայց ես աշխատում էի չը մտածել նրանց մասին: Նստանց շտապելու, կամաց կամաց շքում էի սարերում ու հովիտներում, ժամերով նստում էի դիւղական ճաշարաններում հանդարտ զրոյց էի անում կամ ճաշարանատէրերի ու հիւրերի հետ, կամ թէ չէ պառկում էի տաքացած, հարթ ու հաւասար քարի վերայ և նայում էի, թէ ի՛նչպէս էին լողում ամպերը երկնքում: Իմ բազդից այդ օրերը եղանակները հրաշալի էին: Ամբողջ երեք օր անցկացրի ես այդ զրութեան

մէջ՝ անձնատուր եղած այդ տեսակ զբաղմունքներին—և այդպիսի մի կեանքը, ի հարկէ, ունէր իւր քաղցրութիւնը, թէպէտե ժամանակ առ ժամանակ սիրտս սկսում էր ճնշուել: Իմ մտքերի տրամադրութիւնը միանգամայն համապատասխանում էր այդ երկրի խաղաղ բնութեանը:

Եւս գլխովին անձնատուր եղայ պատահականութեան անդորր խաղին, վերահաս տպաւորութիւններին, որոնք կամացկամաց, մէկը միւսին յաջորդելով՝ հոսում, անցնում էին սրտիս միջով: Եւ այդ սրտում նրանք վերջնավերջոյ թողին մի ընդհանուր զգացմունք, որի հետ համախառնուած էր այն բոլորը ինչ որ տեսել, զգացել և լսել էի եւ այդ երեք օրուայ ընթացքում: Եյո՛, բոլորը, բոլորը համախառնվում էր այդ զգացմունքի հետ—և՛ խէժի նուրբ հոտը, որ տարածուած էր անտառներում, և՛ փայտփորների ճվճվոցն ու թխկթխկոցը, և՛ յստակ առուակների անվերջ շատախօսութիւնը նախշուն կարմրախայտների հետ, աւազուտ յատակի վերայ, և՛ լեռների կիսաորոշ ուրուազները, և՛ կնճռոտ ապառաժները, և՛ փոքրիկ, մաքուր զիւղերն իրենց մեծարելի, հինաւուրց եկեղեցիներով ու ծառերով, և՛ մարգագետինների արագիլները, և՛ մեկուսացած ջրաղացներն իրենց արագապտոյտ անիւներով, և՛ զիւղացիների խնդալից դէմքերը, նրանց կապտադոյն, երկայն փարաջաներն ու մոխրադոյն գուլպաները, և՛ ճոճան, դանդաղաշարժ սայլերը, որոնց մէջ լծած էին լինում գեր-գեր ձիաներ, իսկ երբեմն կովեր, և՛, վերջապէս, երկար մազերով օտարական, պանդուխտ երիտասարդները, որոնց եւ հանդիպում էին տանձենիներով և խնձորենիներով զարդարուած մաքուր ճանապարհների վերայ:

Մինչև անգամ այժմ էլ եւ մեծ հաճոյքով մտաբերում եմ իմ այն ժամանակուայ տպաւորութիւններս: Ողջոյն քեզ, Պերմանական երկրի համեստ անկիւն, ողջոյն քո անկեղծ և անարուեստ վայելչութիւններին, ողջոյն քո համբերատար և տոկուն (թէպէտե ոչ այնքան փութաջան) աշխատութեան պտուղներին, որոնք ջանասէր ձեռքերով սփռուած են ամեն ուրեք... Ողջոյն և խաղաղութիւն քեզ:

Եւս վերադարձայ տուն միայն երրորդ օրուայ վերջը: Մուռացայ ասել, որ դէպի Եսեան ու Պագինն զգացացած զայ-

րոյթիցս եւ փորձ փորձեցի վերականգնանալ յիշողութեանս մէջ իմ չարանկնդ որբւայրուն, բայց ի զուր—բոլոր ջանքերս ապարդիւն անցան: Յիշում եմ, երբ ես սկսեցի մտածել նրա մասին, իմ աչքին ներկայացաւ մի փոքրիկ հինգամեայ դիւղական աղջիկ՝ կլորիկ, հետադնին դէմքով և անմեղ չած աչիկներով: Նա մի աննկարագրելի մանկական պարզամտութեամբ նայում էր ինձ վերայ... Եւս ամաչեցի նրա մաքուր, պայծառ հայեացքից: Եւս չէի ուզում ստախօսել նրա ներկայութեամբ, և հէնց իսկոյն և եթ վերջնական և անդառնալի հրաժարական ողջոյն տուի իմ ջնորքներիս նախկին առարկային:

Տանը եւս գտայ Պագինի տոմսակը: Նա զարմանում էր իմ անսպասելի վճռողականութեան վերայ, յանդիմանում էր ինձ, որ ես նրան էլ հետս չէի վերցրել և խնդրում էր, որ վերադառնալուն պէս՝ գնամ նրանց մօտ: Եւս ուրախութեամբ կարդացի այդ տոմսակը և հէնց միւս օրը ճանապարհուեցայ Լ. քաղաքը:

Բ.

Պագինն ինձ դիմաւորեց բարեկամական ողջոյնով և քաղցր նախատինքների մի ամբողջ հեղեղ թափեց զլսիս: Իսկ Եսեան, կարծես դիմամբ, հէնց որ ինձ տեսաւ, առանց որ և է պատճառի, բարձրաձայն ծիծաղեց և, ըստ իւր սովորութեան, խկոյն փախաւ: Պագինը շփոթուեց և նրա ետեւից քրթմնջալով, որ նա խելագար է, խնդրեց ինձ ներողամիտ լինել դէպի նա: Իրաւն ասած, ես խիստ վերաւորուեցայ Եսեայից: Առանց այն էլ քէֆս տեղը չէր, իսկ նա դարձեալ սկսում էր իւր ծուռումուռ շարժմունքները, իւր տարօրինակ ծիծաղը: Սակայն եւ ինձ այնպէս ձեռացրի, որպէս թէ ոչինչ չը նկատեցի և սկսեցի պատմել Պագինին իմ փոքրիկ ճանապարհորդութեան բոլոր մանրամասնութիւնները: Նա նոյնպէս պատմեց ինձ, թէ ինչ էր շինել ինքը իմ բացակայութեան միջոցին: Բայց մեր խօսակցութիւններն իրար չէին բռնում: Եսեան շարունակ ներս ու դուրս էր անում: Վերջապէս եւ յայտնեցի, որ շուտափոյթ գործ ունեմ և ժամանակ է տուն վերադառնալու: Պագինն առաջ չէր թողնում, յետոյ անթարթ աչքով

նայեց վերաս և ցանկութիւն յայտնեց ինձ ճանապարհ ձգելու: Նախասննեակում յանկարծ մեզ մօտեցաւ Ասեան և ձեռքը պարզեց դէպի ինձ: Աս կամացուկ սեղմեցի նրա մատները և հազիւ նկատելի դուլս տուի: Մակուկավարն ինձ ու Պազինին փոխադրեց Րէյնի միւս ափը և մենք անցնելով հացածառի կողքով, որի մօտ գտնվում էր Մագոննայի փոքրիկ անդրին, նստեցինք նստարանի վերայ, որպէս զի զուարճանք շրջապատող տեսարանով: Այստեղ մեր մէջ տեղի ունեցաւ մի շատ նշանաւոր խօսակցութիւն:

Առաջ մենք դեռ մի փոքր դէսից-դէնից խօսեցինք, յետոյ լուեցինք և նայում էինք պայծառ դետին:

— Ասացէք ինդրեմ, յանկարծ սկսեց Պազինը իւր սովորական ժպիտով, — Բնէ կարծիքի էք դուք Ասեայի մասին: Նա ձեզ փոքր ինչ տարօրինակ աղջիկ է թուում, այնպէս չէ՞:

— Այո, պատասխանեցի ես կարճատեւ տարակուսանքից յետոյ:

Աս չէի սպասում, որ նա խօսք կ'բացէր Ասեայի մասին:

— Նրա մասին որ և է կարծիք յայտնելու համար, պէտք է նրան լաւ ճանաչել, ասաց նա, — նրա սիրտը շատ բարի է, բայց դուրսը, դուրսը օ, Տէրն ազատի, վտանգաւոր է: Նրա հետ եօղայ դնելու ճար չկայ: Մակայն այդ բանում նրան մեղադրել չէ կարելի: Եթէ դուք ծանօթ լինէիք նրա անցեալի, նրա պատմութեան հետ....

— Նրա պատմութեան հետ, ընդմիջեցի ես... Մի՞թէ նա ձեր...

Պազինը նայեց ինձ վերայ:

— Զինի՞ կարծում էք, որ նա իմ քոյրը չէ... ոչ, շարունակեց նա ուշադրութիւն չը դարձնելով իմ շփոթութեան վերայ. — նա ի՞նչ և ի՞նչ իմ քոյրն է, նա հօրս դուստրն է: Ասեցէք ինձ: Աս դէպի ձեզ մեծ հաւատ եմ զգում և կը պատմեմ բոլորը:

«Այրս չափազանց բարի, խելօք և լուսաւորեալ մարդ էր. բայց նա և՛ անբաղդ էր: Թէպէտ ճակատագիրը այնքան էլ անողոք չը գտնուեցաւ դէպի նա, որքան նա անողոք է շատ անոթի վերաբերմամբ, բայց և այնպէս հայրս չը կարողացաւ

դիմանալ մինչև անգամ նրա առաջին հարուածին: Մերահարուած լինելով՝ նա վաղ ամուսնացաւ: Նրա ամուսինը, իմ մայրը, մեռաւ շատ վաղ: Աս մնացի վեց ամսական: Հայրս տարաւ ինձ դիւղ և ամբողջ տասներկու տարի ոտքը դուրս չը դրեց այնտեղեց: Նա ինքն էր կրթում ու դաստիարակում ինձ և երբէք չէր բաժանուիլ ինձանից, եթէ նրա եղբայրը, իմ հարազատ հօրեղբայրս չ'գար մեր բնակած գիւղը: Նա միշտ ապրում էր Պետերբուրգում և բաւականին նշանաւոր պաշտօնի տէր էր: Նա համոզեց հօրս, որ ինձ յանձնէ նորա ձեռքը, նրա խնամատարութեան, որովհետեւ հայրս ամենեւին չէր համաձայնվում թողնել գիւղը: Հօրեղբայրս բացատրեց նորան, որ իմ հասակի երեխայի համար ֆրասսակար է առանձնացած կեանք վարել, որ այնպիսի մի տխուր և միշտ անխօս դաստիարակի ձեռքի տակ, որպիսին հայրս էր, ես կարող էի յետ մնալ իմ հասակակիցներից և նոյն իսկ վարք ու բարքս էլ շատ հեշտութեամբ կարող էր փչանալ: Հայրս երկար ընդդիմացաւ իւր եղբոր կամքին, բայց վերջը համաձայնուեց: Հօրեցս բաժանուելու միջոցին ես լալիս էի: Աս սիրում էի նորան, թէպէտ երբէք նորա դէմքին ոչ մի ժպիտ չէի տեսած. այո, ես սիրում էի նորան, բայց ընկնելով Պետերբուրգ, ես շուտով մոռացութեան տուի մեր խաւար և տաղտկալի բնակավայրը: Աս մտայ զինուորական ուսումնարանը, իսկ այնտեղեց փոխադրուեցայ կայսերական թիկնապահ զօրադունդը: Ամեն տարի ես գնում էի գիւղ մի քանի շաբաթ ժամանակամիջոցով միայն և ամեն անգամ հօրս գտնում էի նոյն տխուր, նոյն մնայլ դրութեան մէջ, միշտ խորասուզուած մի տեսակ երկչտութեան հասցրած մտախոհութեան մէջ: Նա ամենայն օր եկեղեցի էր յաճախում: Համարեա միշտ լուռ էր, կարծես ասել—խօսել մոռացել էր: Իմ այցելութեան տարիներէց մինում (այն ժամանակ ես քսան տարեկանից անցէի) ես առաջին անգամ պատահեցայ մեր ասնը մի տասնամեայ, նիհար և սեւաչեայ աղջկան — Ասեային: Հայրս ասաց, որ նա որք է և նորան վերցրել է իւր մօտ որպէս որդեգրուհի, գոնէ նա այդպէս բացատրեց: Աս մի առանձին ուշադրութիւն չը դարձրի այդ աղջկայ վերայ: Նա ճարպիկ էր, վայրենի և միշտ լուռ, որպէս փոքրիկ գաղան: Աւ ամեն անգամ, երբ ես մտնում էի

Հօրս սիրած սենեակը, այն ահագին և մաշլ սենեակը, ուր մայրս աւանդել էր իւր հոգին և ուր մինչև անգամ ցերեկներն էլ մոմեր էին վառվում, նա խոյն կամ Հօրս վրէտերեան բազկաթուռի ետևն էր մօտում ու կուչ գալիս, կամ ծածկվում էր պրապահարանի ետևը: Այնպէս պատահեց, որ հետևեալ երեք — չորս տարին պաշտօնական գործերով ծանրաբեռնուած՝ ես էլ չը կարողացայ զիւղ գնալ: Աս ամեն ամիս Հօրիցս մի-մի կարճ նամակ էի ստանում: Նա իւր նամակներում շատ սակաւ էր խօսում Ասեայի մասին և այն էլ հարևանցօրէն: Հայրս արդէն յիսուն տարեկան էր, բայց նա դեռ երիտասարդ էր երևում: Սակայն երևակայեցէք իմ սարսափը, յանկարծ ես մի անակնկալ նամակ եմ ստանում մեր գործակատարից, որով նա յայտնում է Հօրս մերձ ի մահ գրութիւնը և աղերսում է ինձ, որ որքան կարելի է շտապեմ հասնել զիւղը, եթէ ուզում եմ վերջին մնաս բարեն ասել Հօրս: Աս խոյն ինձ զցեցի զիւղը և, թէպէտ Հօրս դեռ կենդանի գտայ, բայց նա արդէն հոգեվարքի մէջ էր: Իմ դալուստը նորան սաստիկ ուրախացրեց: Նա առաւ ինձ իւր նիհար, չոր բազուկների մէջ, մի տեսակ՝ համ փորձող, ճամ աղերսական հայեացքով երկար նայեց աչքերիս և խօսք առնելով ինձանից, որ ես կը կատարեմ նորա վերջին խնդիրքը՝ հրամայեց իւր հին սպասաւորին բերել իւր մօտ Ասեային: Ծերունին մօտեցրեց աղջկանը հիւանդի անկողնին: Ասեան հազիւ էր կարողանում ոտքի վերայ կանգնել և ամբողջ մարմնով գողում էր:

— Ահա, ասաց Հայրս՝ հազիւ շունչը ես բերելով, — կտակում եմ քեզ իմ աղջկանը — քո քրոջը: Դու ամեն ինչ կիմանաս Յակօբից, աւելացրեց նա՝ ցոյց տալով սպասաւորի վերայ:

Ասեան սկսեց հեկեկալ և երեսն ի վայր ընկաւ մահճակալի վերայ... Աէս ժամից յետոյ Հայրս հոգին աւանդեց:

Ահա ինչ իմացայ ես: Ասեան ծնողներիս նախկին նաժիշտ Տատեանայի աղջիկն էր: Շատ լաւ յիշում եմ ես այդ Տատեանային, յիշում եմ նորա բարձր, վայելուչ հասակն ու կերպարանքը, նորա խոշոր, թուխ-թուխ աչքերով խիստ և խոհուն դէմքը: Նա այն ժամանակ համարվում էր մի հպարտ, գոռոզ աղջիկ, որին մօտենալ չէր կարելի: Որքան կարողացայ

և հասկանալ Յակօբի պատմութեան զանազան ընդմիջումներից, նորա տեղ-տեղ մեծարանօք լռութիւն պահպանելուց, Հայրս ծածուկ յարաբերութիւններ էր հաստատել Տատեանայի հետ մօրս մահուանից մի քանի տարի յետոյ: Տատեանան այն ժամանակ այլևս նաժիշտ չէր. նա ապրում էր իւր ամուսնացած քրոջ տանը, որը անասնապահութեամբ էր պարապում: Հօրս սիրտը սաստիկ կպել էր նորան և մինչև անգամ, զիւղից հեռանալուցս յետոյ, ցանկութիւն էր յայտնել ամուսնանալու նորա հետ, բայց Տատեանան, չնայելով Հօրս թախանձանքներին՝ չէր համաձայնուել նորա կինը դռնալու:

— Հանգուցեալ Տատեանա Ալասեֆեան, — պատմում էր Յակօբը, — այնքան խոհեմ գանուեցաւ, որ չուզեց ձեր Հօրը վերաւորել: Նա մի անգամ դռան մօտ կանգնած և ձեռքերն էլ խաչաձև գլխի վերայ դարսած՝ ահա ինչ պատասխանեց Հօրդ. «Ախար ես քեզ ի՞նչ կսաղամ, ես քեզ ի՞նչ կին կարող եմ լինել, մի՞թէ ես տիկին կոչուելու լայեղ եմ, — այո, հէնց այդպէս խօսեց Տատեանան. ես այդ ականջովս լսեցի: Նա մինչև անգամ չը կամեցաւ տեղափոխուել մեր տունը և շարունակում էր Ասեայի հետ միասին իւր քրոջ տան ապրել: Մանուկ ժամանակս ես Տատեանային տեսնում էի միմիայն տօն օրերին, եկեղեցում: Գլուխը փաթաթած սև թաշկինակով, դեղին շաշն ուսերին՝ նա միշտ կանգնում էր ամբօխի մէջ, պատուհանի մօտ: Այդ միջոցին նորա դէմքի կէտը բացորոշ կերպով նկարուած էր լինում թափանցիկ ապակու վերայ: Նա ազօթում էր հեղութեամբ և, ըստ հին սովորութեան, գլուխը բոլորովին խոնարհած: Երբ հօրեղբայրս ինձ հեռացրեց զիւղից, Ասեան ընդամենը երկու տարեկան էր: Ես իննը տարեկան հասակում նա զրկուեց մօրից:

Հէնց որ Տատեանան մեռաւ, Հայրս Ասեային առաւ իւր մօտ: Նա առաջուց արդէն ցանկութիւն էր յայտնել Ասեային իւր մօտ պահելու, բայց Տատեանան այդ ևս մերժել էր: Սակայն երևակայեցէք ձեզ, թէ որպիսի յեղափոխութիւն պէտք է առաջանար Ասեայի մէջ, երբ նորան բերեցին Հօրս տունը: Նա դեռ մինչև օրս էլ չէ կարողանում մոռանալ այն բոպէն, երբ նորան առաջին անգամ մետաքսեայ շոր հագցրին և համբուրեցին նորա փոքրիկ ձեռքը: Մայրը քանի կենդանի էր,

նորա հետ խիստ էր վարվում: Իսկ այժմ հորս մօտ նա կատարեալ ազատութիւն էր վայելում: Նորա ուսուցիչը—հայրս էր: Նա բացի հօրիցս ոչ ոքին չէր տեսնում: Հայրս նորան թէպէտ երես չէր տալիս, այսինքն՝ ծծմօր պէս շարունակ չէր գուրգուրում Ստեպին, բայց նա սաստիկ սիրում էր նորան և նորա ոչ մի հաճոյքին արգելք չէր դնում: Նա իւր սրտում խոստովանում էր, որ ինքը յանցաւոր է Ստեպի առջև: Ստեան շատ շուտով հասկացաւ, որ տան մէջ ամենագլխաւորն ինքն է. նա գիտէր, որ տանտէրը իւր հայրն է: Սակայն նա շատ շուտով զգաց և իւր խարուսիկ դրութիւնը: Ինքնասիրութեան բոցը նորա մէջ աւելի սաստկացաւ. սաստկացաւ և թերահաւատութեան զգացմունքը: Վատ-վատ սովորութիւններն արմատ ձգեցին նորա մէջ: Զբացաւ նորա պարզասրտութիւնը: Նա ուզում էր (ինքը խոստովանեցաւ ինձ այդ բանը) ստիպել ամբողջ աշխարհին, որ սա մոռանար նորա ծագումը: Նա ամաչում էր և՛ իւր մօրից, և՛ իւր ամօթանքից բայց, յաճախ և՛ հպարտանում էր նորանով: Գուր տեսնում էք, ուրեմն որ նա շատ բան գիտէր առաջ, գիտէ և այժմ. այն ինչ իւր այդ հաստիւրում նա չը պէտք է գիտենար այդ բոլորը... Բայց մի՞թէ նա մեղաւոր է: Նորա մէջ աճում, զօրանում էր մատաղ ոյժը, նորա մէջ հուում էր արիւնը, բայց չկար մէկը, որ միշտ նորա հետ լինելով, միշտ նորա կողքին ապրելով, ուղղութիւն տար նորան... Եւմեն բանում կատարեալ անկասութիւն: Նւ մի՞թէ հեշտ էր անշեղ և անյողգողք մնալ այդ դրութեան մէջ: Նա չէր ուզում յետ մնալ ուրիշ օրիորդներից: Նա իւր ուշ ու մտքը տուեց գրքերին: Բայց ի՞նչ օգուտ կարող էին բերել նորան այդ գրքերը: Անկանոն սկսուած կեանքն, անկանոն էլ ընթացում էր: Թէպէտ այս էլ պէտք է ասած, որ նորա սիրար չը փչացաւ, և խելքն էլ մնաց անփաս:

Նւ ահա քսան տարեկան հասակում ինձ վիճակվում է հսկիլ և խնամել տասներեքամեայ մի աղջկայ: Հօրս մահուանից յետոյ, առաջին օրերում նա գողում, սարսուում էր իմ ձայնը լսելիս, բայց յետոյ նա փոքր առ փոքր ընտելացաւ ինձ: Իսկ երբ համոզուեց, որ ես նորան, արդարև, քրոջ տեղ եմ

ընդունում և սիրում եմ նորան, որպէս քրոջը—ինքն էլ սաստիկ սիրեց ինձ:

Նս նորան բերեցի Պետերբուրգ: Թէպէտ խիստ ցաւալի էր ինձ բաժանուել նորանից, բայց ապրիլ նորա հետ միասին ես ոչ մի կերպ չէի կարող: Նս նորան առի Պետերբուրգի ամենանշանաւոր գիշերօթիկ վարժարաններից մինը: Ստեան ինքն էլ զգաց մեր անջատման անհրաժեշտութիւնը: Բայց չնայելով դրան, նա սկզբում հիւանդացաւ և քիչ մնաց մեռնէր: Վերջապէս նա սովորեց համբերել և ամբողջ չորս տարի դիմացաւ վարժարանում: Միայն թէ հակառակ իմ անկալութիւնների՝ նա մնաց համարեա նոյնը, ինչ որ առաջ էր: Վարժարանի վերակացուհին յաճախ դանդաւորում էր ինձ նորա մասին. Ոչ պատժելու հնար կայ», ասում էր նա «ոչ էլ քաղցր խօսքին է ականջ դնում»: Ստեան խիստ բանիմաց աղջիկ էր, սովորում էր շատ զեղեցիկ, ամենքից առաջ էր, միայն թէ ամենքի հետ մի զծի վերայ կանգնել, կնթարկուել ընդհանուր կանոններին ամենեկին չէր ցանկանում. նա կամակոր էր և ամենքի վերայ վայրենի աչքով էր նայում... Նս նորան այդ բանում այնքան էլ խիստ մեղադրել չէի կարող: Իւր այդ վիճակում նա կամ պէտք է հնազանդուէր, կամ պէտք է վայրենանար—երկուսից մէկը: Իւր բոլոր ընկերուհիներից նա մտերմացաւ միայն մէկի հետ—մի տղեկ, արհամարուած և չքաւոր աղջկայ հետ: Մնացեալ օրիորդները, որոնց հետ միասին դաստիարակվում էր նա և որոնք մեծ մասամբ յայտնի և բարձրանուն ընտանիքներից էին, չէին սիրում Ստեպին և ձեռքից եկածին չափ՝ խոցում ու խայթում էին նորա սիրար: Բայց Ստեան էլ մաղի չափ յետ չէր մնում նրանցից: Մի անգամ Արբազան Պատմութեան դասին, դասատուն սկսեց խօսել արատների մասին: Հողաքորթութիւնն ու երկչտութիւնն ամենավատ արատներն են,—բարձրաձայն գոչեց Ստեան: Մի խօսքով նա շարունակում էր իւր ընթացքը: Միայն նորա շարժմունքներն ու ձևերը փոքր ինչ փոխուեցան դէպի լաւը, թէպէտ դրանում ևս, կարծեմ, այնքան էլ չը յառաջագիմեց:

Վերջապէս լրացաւ Ստեպի տասնեօթը տարին: Նյդ հասակում թողնել նորան դարձեալ վարժարանում—անկարելի էր: Նս տարակուսանքի մէջ էի: Յանկարծ իմ գլխում ծագեց

մի բարեյաջող միտք—այն է՝ թողնել պաշտօնս և Ասեային հետս առած՝ մէկ կամ երկու տարի ժամանակամիջոցով գնալ արտասահման: Մտածելն ու գլուխ բերելը մէկ եղաւ: Աւ ահա մենք ապրում ենք Րէյնի եզերքին, որտեղ ես աշխատում եմ զեղարուեստով զբաղուել, իսկ նա... նա դարձեալ առաջուայ չարած՝ ձին է. դարձեալ զանազան գժութիւններ է ա՛նում, ինչպէս և առաջ: Այժմ յոյս ունեմ, որ դուք այնքան էլ խիստ չէք դատիլ նորան: Թէպէտ նա իրեն այնպէս է ձեւացնում, որպէս թէ նորա համար ամեն ինչ միւլենոյն է, որպէս թէ նորա աչքում ոչ մի բան ոչինչ արժէք չունի, սակայն նա իւրաքանչիւրի կարծիքին նշանակութիւն է տալիս, իսկ ձերին խօսառուել ևս:

Պագինը դարձեալ ժպտաց իւր մեղմ ժպտով: Աս ամուր սեղմեցի նորա ձեռքը:

— Այդ խօս պղպէս, շարունակեց դարձեալ Պագինը, — բայց այսուամենայնիւ, նորա հետ ապրելը խաթաբալ է: Աս վառօդ է: Մինչև օրս նորան զեռ ոչ ոք դուր չէ եկել բայց, Տէրն ազատի, եթէ նա մէկին սիրեց: Աս երբեմն չը զիտեմ, ինչպէս վարուել նորա հետ: Տեսէք թէ այս օրերս ինչ քամի էր փչել նորա խելքին: Յանկարծ սկսում է հաւատացնել ինձ, որ ես իբրև թէ առաջուանից աւելի սառնասրտացել եմ՝ դէպի նա և թէ նա միայն ինձ է սիրում և յաւիտեան միայն ինձ կը սիրէ... Աւ այդ միջոցին նա այնպէ՛ս լաց եղաւ....

— Ա՛, ահա թէ ինչու մն է բանը... ասացի ես և լեզուս կծեղով սուս կացայ:

— Բայց, ասացէք խնդրեմ, հարցրի ես Պագինին (մեր խօսակցութիւնն անկեղծ և պարզ ձև ստացաւ)— մի՞թէ, իրաւ, նա մինչև օրս զեռ ոչ ոքի չէ հաւանած: Չէ՞ որ նա Ատտիբուրգում շարունակ երիտասարդներ էր տեսնում, ասում, խօսում էր նորանց հետ:

— Հէնց այդ երիտասարդներն էին, որ նորան դուր չէին գալիս: Ա՛յ, Ասեայի փնտռածն ուրիշ է: Նորա սիրահարը կամ հերոս պէտք է լինի, կամ մի գերբնական մարդ, կամ լեռնանձաւում ապրող մի վայելչատես հովիւ: Սակայն բաւական է, աւելացրեց Պագինը, ոտքի կանգնելով— առանց այն էլ խօսքով ընկայ և ձեզ էլ այսքան ժամանակ պահեցի այստեղ:

— Բայց զի՞տէք ինչ կայ, սկսեցի ես, — ինձ էլ պէտք է հետներդ վերցնէք, գնանք ձեզ մօտ. ես տուն գնալ չեմ ուզում:

— Հապա ձեր պարապմունքը:

— Աս ոչինչ չը պատասխանեցի: Պագինը բարեսրտութեամբ ժպտաց, և մենք վերադարձանք 1... Տեսնելով ծանօթ այգեստանը և սարի գաղաթին զտնուող փոքրիկ տնակը, սիրտս մի ինչ—որ քաղցրութիւն զգաց, մի անպատմելի քաղցրութիւն — կարծես ծածուկ մեղը ածեցին նորա մէջ: Պագինի պատմութիւնից յետոյ, ես մի տեսակ թիթեւութիւն էի զգում:

Թ.

Ասեան մեզ զիմաւորեց հէնց դռան շէմքում: Աս դարձեալ սպասում էի, որ նա կսկսէր ծիծաղել բայց նա մեր առջև դուրս եկաւ բոլորովին զուսմածափ, լուռ ու մունջ, աչքերը զիտին խոնարհած:

— Ահա նա դարձեալ, — խօսեց Պագինը՝ մատնացոյց անելով ինձ վերայ— և զիտցած եղեր, որ նա ինքը կամեցաւ վերադառնալ:

Ասեան հարցական հայեացք ձգեց ինձ վերայ: Աս էլ իմ հերթում ձեռք պարզեցի դէպի նա և այս անգամ ամուր սեղմեցի նորա փոքրիկ սառը մատները: Աս այժմ նորան շատ էի խղճում: Աս այժմ շատ բան զիտէի նորա մասին, զիտէի այն, ինչ որ առաջ ինձ մոլորեցնում, երկմտութեան մէջ էր ձգում: Նորա ներքին անհանգստութիւնը, և այն, որ նա իրեն պահել չը զիտէր, որ նա աշխատում էր ամենքի առջև կերպարանափոխուել, ձեւակերպուել— այդ բոլորն այժմ պարզ ու հասկանալի էին ինձ համար: Աս նայեցի նորա սրտի խորքը — մի գաղտնի թախիծ շարունակ ճնշում էր այդ սիրտը. նորա անփորձ ինքնասիրութիւնը վերգովուած՝ աղմկում, յուզվում էր: Բայց նորա ամբողջ էութիւնը ձգտում էր էր դէպի ճշմարտութիւնը: Աս այժմ հասկացայ, թէ ինչու այդ տարօրինակ աղջիկը հրապուրեց ինձ: Աս ինձ հրապուրեց ոչ միայն իւր կիսավայրենի չքնաղութեամբ, որով ոտքից

մինչև դուրս գեղազարդուած էր նորա նուրբ, քնքոյշ մարմինը, այլև,—իւր սրտով:

Ինձ դուր էր գալիս և՛ նորա սիրտը:

Գազինը սկսեց տակնուվրայ անել իւր նկարները: Աստեղային առաջարկեցի զբռնել միասին խաղողի այգեստանում: Մա իսկոյն համաձայնուեց, յայտնելով իւր ուրախութիւնն ու, համարեա, ամենախոնարհ պատրաստականութիւնը: Մենք իջանք մինչև սարի կէսը և նստեցինք լայն տափարակի վերայ:

— Մի՞թէ դուք առանց մեզ չէիք տխրում,—սկսեց Աստեան:

— Բայց մի՞թէ դուք առանց ինձ տխրում էիք,—հարցրի ես:

Աստեան կողքի վերայ նայեց ինձ:

— Այո՛, պատասխանեց նա:—Բայց լեռներում լճէ, շարունակեց նա իսկոյն. — բարձր են նորանք, ամպերիցն էլ բարձր են: Պատմեցիք ինձ, ի՞նչ տեսաք այնտեղ: Մուք եղբորս պատմում էիք, բայց ես ոչինչ չը կարողացայ լսել:

— Ո՞վ է մեղաւոր, ի՞նչու հեռացաք,—նկատեցի ես:

— Աս հեռացայ. .. որովհետեւ... Ղէ այժմ էլ չեմ հեռանար, աւելացրեց նա այնպիսի մի ձայնով, որ լի էր անտարակուսելի քաղցրութեամբ: Մուք այսօր բարկացած էիք, այնպէս չէ՞:

— Ե՛ս:

— Մուք:

— Բայց ի՞նչ բանի համար, ասացէք խնդրեմ...:

— Չը գիտեմ, բայց դուք բարկացած էիք և բարկացած էլ հեռացաք: Աս շատ նեղացայ, որ դուք այդպէս գնացիք, և այժմ ուրախ եմ, որ վերադարձաք:

— Աս նոյնպէս ուրախ եմ, որ վերադարձայ,—կրկնեցի ես:

Աստեան ուսերը շարժեց, ինչպէս որ այդ յաճախ երեխաներն են անում, երբ նրանք որ և է քաղցրութիւն են զգում:

— Օ, ես գիտեմ ամեն ինչ գուշակիլ, շարունակեց նա.— շատ անգամ ես միւս սենեակում նստած հօրս հազարուցն անգամ իմանում էի՝ զո՞հ է նա ինձնից, թէ՞ ոչ:

Մինչև այդ օրը Աստեան ոչ մի անգամ ոչինչ չէր խօսեցած իւր հօր մասին: Այդ բանն ինձ ապշեցրեց:

— Մուք սիրո՞ւմ էիք ձեր հօրը,—հարցրի ես և յանկարծ զգացի, որ կարմրում եմ: Այդ բանը ինձ խիստ զայրացրեց:

— Մա ոչինչ չը պատասխանեց և նոյնպէս կարմրեց: Մենք երկուսս էլ լռեցինք: Հեռվում, Բէյնի վերայ, ծխեայ քուլաներ արձակելով, արագ սահում էր շողինաւը: Մենք սկսեցինք նայել նորան:

— Ի՞նչու չէք պատմում, շնջաց Աստեան:

— Ի՞նչու դուք այսօր հէնց որ ինձ տեսաք, ծիծաղեցիք,—հարցրի ես:

— Ինքս էլ չը գիտեմ: Արբեմն ես ուզում եմ լայ բայց ծիծաղում եմ: Մուք ինձ չպէտք է դատէք... իմ արարմունքներով: Հա՛, ի դէպս՝ ասացէք խնդրեմ, այդ ի՞նչ հեքիաթ է, որ պատմվում է Արեղէի մասին: Այն նորա լեռը չէ, որ երեւում է այստեղեց: Ասում են, որ նա առաջ ամենքին էլ ջրում խողզելիս է եղել, իսկ երբ սիրահարուել է, ինքն է նետուել ջուրը: Աս շատ հաւանում եմ այդ հեքիաթը: Փրառ Արեղէն ինձ ինչ տեսակ հեքիաթներ ասէք, պատմում է: Փրառ Արեղէն մի սև կատու ունի, գեղին աչքերով...:

Աստեան դուրսը բարձրացրեց և իւր մետաքսանման գանգուրները գրաւիչ կերպով շղահարեց:

— Ա՛խ, որքան ուրախ եմ զգում ինձ,—բացականչեց նա:

Այդ ըոպէին մենք լսեցինք բեկբեկուած, միակերպ հնչուններ: Հարիւրաւոր ձայներ միահամուռ և չափաւոր ելեւջներով կրկնում էին մի հողեր, սրբազան մեղեդի: Ժամաւորների խուռն բազմութիւնը խաչերով ու խաչվառներով ընթանում էր զէպի ներքև:

— Ա՛խ, արժէ նրանց հետ լինել, ասաց Աստեան, ականջ զնելով ձայների աստիճանաբար թուլացնող թնդիւներին:

— Մի՞թէ դուք այդ աստիճան ջերմեանդ էք:

— Նրանց հետ լինել, գնալ մի որ և է տեղ, հեռու, հեռու, գնալ աղօթիւր, գնալ մի ծանր, մի սխրալի գործ կատարելու, շարունակեց նա:—Ապա թէ ոչ օրերն ացնում են, կեանքն էլ կ'անցնի, բայց ի՞նչ ենք կատարել մենք:

— Ուրեմն դուք փառք էք փնտռում, նկատեցի ես,—դուք

չէք ուզում անօգուտ ապրել, դուք ուզում էք մահից յետոյ մի անուն, մի յետք թողնել...

— Բայց մի՞թէ այդ անհնարին է:

«Անհնարին է», քիչ մնաց կրկնէի ես... Բայց նայելով նրա պայծառ աչքին, միայն մրմնջացի.

— Փորձեցէք:

— Բայց ասացէք խնդրեմ, խօսեց Ասեան կարճատև լռութիւնից յետոյ, որի միջոցին ինչ-որ ստուերներ անցան նորա արդէն գունատուած դէմքի վերայով:— ձեզ շատ էր դուր գալիս այն կինը... Յիշում էք, մեր ծանօթութեան երկրորդ օրը եղբայրս խմեց նրա կենացը:

Ես ծիծաղեցի:

— Ձեր եղբայրը հանաք էր անում: Գոնէ մինչև օրս ես ոչ մի կին չեմ հաւանած և այժմ էլ դեռ ոչ ոքին չեմ հաւանում:

— Բայց դուք կնոջ ի՞նչն էք հաւանում, հարցրեց նա, անմեղ հեռաքրքութեամբ զլուխը ետ ձգելով:

— Ի՞նչ տարօրինակ հարց, բացակայելիցի ես:

Ասեան փոքր ինչ շփոթուեց:

— Ես չը պէտք է ձեզ այդպիսի մի հարց առաջարկէի, այնպէս չէ: Ներեցէք ինձ: Ես սովորել եմ բերանս եկածը դուրս տալ: Զէնց դրա համար էլ ես վախենում եմ խօսելուց:

— Խօսեցէք, ի սէր Աստուծոյ, խոսեցէք, մի վախենաք, — վրայ բերեցի ես: — Անչափ ուրախ եմ, որ դուք վերջապէս փոքր առ փոքր մոռացութեան էք տալիս ձեր գծութիւնները:

Ասեան զլուխը կախեց, և այդ ըոպէին նրա դէմքի վերայ յայտնուեցաւ մի մեղմ և թեթև ծիծաղ: Ես նրան երբէք չէի տեսած այդպէս ծիծաղելիս:

— Դէ, պատմեցէք, շարունակեց նա և ձեռքով սղալելով իւր գէրիայի փեշերը՝ ծածկեց նրանցով ոտները, կարծես պատրաստօրէն էր դեռ երկար նստելու:— Պատմեցէք, կամ կարդացէք ինձ մի բան, ինչպէս որ, յիշում էք այն օրը, «Օնեզինից» կարդացիք...

Նա յանկարծ մտածմունքի մէջ ընկաւ:

«Ուր շիրմի վերայ մօրըս խղճալի  
«Խաչն ու ծառերն են այժմ հովանի»...»

կիսաձայն մրմնջաց նա:

— Պուշկինինն այդպէս չէ, նկատեցի ես:

— Իսկ ես կցանկայի Տատեանան լինել, շարունակեց նա նոյն մտախոհութեամբ:— Դէ, պատմեցէք, — յետոյ վրայ բերեց նա շտապով:

Բայց ում մտքովն էր անցնում այդ ըոպէին մի բան պատմել: Ես նայում էի նրա վերայ, նայում էի նրա հեղ և հանդարտ կերպարանքին, նրա չքնաղ և արևի պայծառ լուսով տակաւին ոսկեղունուած կաղմուածքին: Ամեն ինչ ուրախ ու զուարթ շողշողում էր մեր շուրջը: Աչերը — երկինքը, ներքերը — երկիրն ու ջուրը: Օդն անգամ, կարծես, յազեցած էր փայլուն լուսով:

— Նայեցէք, ի՞նչ գեղեցիկ է, — շնջացի ես ակամայ ձայնս ցածրացնելով:

— Այո, գեղեցիկ է, — նոյն մեղմութեամբ պատասխանեց նա, առանց ինձ վերայ նայելու:— Ախ, եթէ մենք թռչուններ լինէինք, ի՞նչպէս կ'ախարհէինք, ինչպէս կ'սլանայինք... Խորը, խորը կըսուզուէինք այս կապուտակ եթերի մէջ... Բայց, աւանդ, մենք թռչուններ չենք:

— Մեզ վերայ կարող են թևեր բանել, առարկեցի ես:

— Ի՞նչպէս:

— Եպրեցէք և կիմանաք: Վան այնպիսի զգացմունքներ, որոնք մեզ երկրից թռչնում են դէպի վեր: Անհոգ կացէք, դուք թևեր կունենաք:

— Բայց դուք ունեցե՞լ էք:

— Ի՞նչ ասեմ... գոնէ, մինչև օրս ես դեռ ոչ մի կողմ չեմ թռած:

Ասեան դարձեալ մտածմունքի մէջ ընկաւ: Ես փոքր ինչ թեքուեցայ նրա կողմը:

— Դուք զի՞տէք վալ'ս պարել, հարցրեց նա յանկարծ:

— Գիտեմ, պատասխանեցի ես, փոքր ինչ ապշած:

— Ուրեմն գնանք... Ես կիսնդրեմ եղբօրս, որ նա մեզ համար վալ'ս ածի... Մենք այնպէս կ'երևակայինք, թէ արդէն թևաւորուել ենք և թռչում ենք:

Նա վազեց դէպի տուն: Եւ նոյնպէս վազեցի նրա ետեւից: Մի քանի վայրկեանից մենք արդէն ճախրում էինք փոքրիկ, նեղ սենեակում՝ ոգևորուած Վաններացի քաղցրահնչուն ձայներից: Ասեան շատ զեղեցիկ էր պարում: Իսկ իրապարտուած էր իւր պարով: Յանկարծ նրա կուսական—խիստ դէմքի վերայ փայլեց մի ինչ-որ փափուկ, կանացի մեղմութիւն: Այնուհետեւ երկար ժամանակ ես զգում էի, թէ որպէս նրա քնքոյշ իրանը հպվում էր իմ ձեռքին: Երկար ժամանակ ես լսում էի նրա սրտատրոփ, ականջ փաղաքշող շնչառութեան մեղմ ձայնը, երկար ժամանակ ես նայում էի նրա թուխ-թուխ, անշարժ, համարեա փակ աչքերին, նրա զունատ, բայց աշխուժալի դէմքին, որ հետզհետէ աւելի և աւելի զուարթանում ու թարմանում էր իւր վերայ սփռուած դանդուրների կայտառ ծփումից:

Փ.

Այդ օրն այնքան քաղցր անցաւ, որ աւելին պահանջել չէր կարելի: Մենք հրձվում էինք, որպէս մանուկներ: Ասեան այդ օրը խիստ դուրեկան էր երևում և իրեն շատ պարզ ու հասարակ էր պահում: Պազինը նայելով նրա վերայ՝ ուրախանում էր: Եւ շատ ուշ հեռացայ նրանից: Անցնելով Քէյնի կէտը, ես խնդրեցի մակուկավարին, որ նա նաւակը դարձնի դէպի գետի հոսանքը: Ծերունին թիակները դուրս հանեց ջրից և մեծապանձ գետը մղեց մեզ դէպի ներքև: Եւ նայեցի շուրջս, ականջ դրի, յիշեցի անցեալը—և յանկարծ սրտիս մէջ զգացի մի գաղտնի անհանդատութիւն... աչքերս զցեցի դէպի երկինք — այնտեղ ևս անհանդատութիւն էր տիրում: Աստեղասփիւռ երկինքը շարունակ շարժվում էր: Թեքուեցայ դէպի ջուրը... սակայն այնտեղ, գետի մնայլ և սառը խորքում նոյնպէս օրօրվում ու զոզոզողում էին ասաղերը: Ամենուրեք իմ աչքին երևում էր մի աղմկալից շարժում—և նոյն շարժումը, նոյն աղմուկն սկսում էր արթնանալ և իմ մէջ: Եւ յենուեցայ նաւակի ափին... Ինձ խռովում էին ականջիս հնչուող քամիի շշնջոցը և զեկի տակից լսուող ջրի մեղմ խոխոջիւնը: Ինձ չէր զովացնում նոյն իսկ ալիքի հովաշունչ

սուսփիւնը: Պետի եղերքին երգեց սոխակը է սիրտս լցրեց իւր կլկլոցի քաղցր թոյնով: Աչքերիս մէջ եռացին արցունքներ, բայց դրանք աննպատակ հիացմունքի արցունքներ էին: Իմ զգացածը ոչ թէ մի խռովայոյց և հէնց նոր ճաշակած անմեկնելի տենչանքների զգացումն էր, որից սիրտն սկսում է լայնանալ, աղատ շնչել և թուում է նրան, թէ արդէն ամեն ինչ հասկանում, ամեն ինչ սիրում է... Ո՛չ, իմ մէջ բորբոքուեց բաղդի ծարաւը: Եւ դեռ չէի համարձակվում այդ բաղդին տալ իւր անունը: Բ՛աղդ, անյազենալի, անսահման բաղդ—ահա ինչ էի ուզում, ես ահա ինչու համար էի ես տառապում... Մակոյլը շարունակ առաջ էր սահում, իսկ ծերուկ-մակուկավարը թիակները ձեռքին, մէջքը կորացարած՝ նիրհում էր:

ՓԱ.

Հետեւեալ օրն ուղևորուելով դէպի Պազինին, ես ինձ, իրաւ է, չէի հարցնում թէ արդեօք սիրահարուած եմ Ասեայի վերայ, բայց շատ էի մտածում նրա մասին: Ինձ զբաղեցնում էր նրա վիճակը: Եւ ուրախ էի, որ մենք այդպէս անսպասելի կերպով բարեկամացանք: Մինչև այդ օրը նա երես էր դարձնում ինձանից: Եւ ահա վերջապէս նա բացուեց իմ առջև, բացուեց—և նրա զիւթից զիւթից լուսով փայլեց նրա պատկերը, որքան նոր էր այդ պատկերն ինձ համար, որպիսի գաղտնի հրապոյրներ ամօթխածութեամբ ցոլացնում էր նա...

Չուարթ ու վստահ զնում էի ես ծանօթ ճանապարհով, անդադար նայելով հեռուից սպիտակին տուող անակին: Եւ չէի մտածում ոչ միայն ապագայի, այլ նոյն իսկ հետեւեալ օրուայ մասին: Եւ ինձ միանգամայն գոհ և ուրախ էի զգում:

Երբ ես ներս մտայ սենեակը, Ասեան կարմրեց: Նա դարձեալ զուրբու՛լ ու կոկուկ էր, բայց նրա դէմքի արտայայտութիւնը չէր համապատասխանում հազուստին: Նա ախուր էր: Իսկ ես կեկ էի այնպէս ուրախ: Ինձ այնպէս թուաց, թէ նա մինչև անգամ, ըստ սովորութեան, պատրաստուեց փախչելու, բայց մի կերպ զսպելով իրեն՝ մնաց: Իսկ Պազինին ես զտայ նկարիչներին յատուկ այն բոցավառ և կատաղե տաղնապի մէջ, որն իբրև ուշազնացութիւն, անակնկալ պաշարում

է ինքնակոչ գեղարուեստասէրներին, երբ նրանք սկսում են երևակայել, որ իրենց արդէն յաջողուել է, ինչպէս իրենք ասում են. «Ռ՛անել բնութեան պոչից»: Մաղերը խճճած և հագուստը ներկերով կեղտոտած՝ նա կանգնած էր փայտէ շրջանակի վերայ փռած սպիտակ պաստառի առջև: Վաճինն ազատ դէս ու դէն շարժելով՝ նա, համարեա, կատաղաբար դուրս տուեց ինձ, յետոյ փոքր ինչ ետ կանգնեց, աչքերը հպելով նայեց պատկերին և ապա վրայ ընկնելով՝ սկսեց նկարել: Եւ չուզեցի խանգարել նրան և նստեցի Եսեայի կողքին:

Նա իւր թուխ աչքերը հանդարտութեամբ դարձրեց դէպի ինձ:

— Ղուբ այսօր այն չէք երևում, ինչ որ երէկ էիք, — նկատեցի ես մի քանի ապարդիւն փորձերից յետոյ, որոնցով աշխատում էի հալածել նրա դէմքի լրջութիւնը:

— Եյո՛, այն չեմ երևում, — առարկեց նա խուլ և հանդարտ ձայնով, — բայց այդ ոչինչ: Եւ այս գիշեր փոքր ինչ վատ էի քնած. բոլոր ժամանակ մտածում էի:

— Ի՞նչի մասին:

— Օ, շատ և շատ բաների մասին: Եյդ սովորութիւնն իմ մէջ արդէն մանկութիւնիցս է մնացած, երբ ես դեռ մօրս հետ էի ապրում...:

Նա դժուարութեամբ արտասանեց այդ խօսքը, և յետոյ մի անգամ էլ կրկնեց:

— Երբ ես դեռ մօրս հետ էի ապրում... Եւ մտածում էի՝ ի՞նչու արդեօք ոչ ոք չը գիտէ, թէ ի՞նչ կ'պատահի նրան շարունակեց Եսեան: — Իսկ շատ անգամ թէպէտ չարիքը, ձախորդութիւնը տեսնում ես էլ, բայց նրանից ազատուել չես կարողանում: Եւ վերջապէս ի՞նչու երբէք չի կարելի յայտնել բոլոր ճշմարտութիւնը... Յետոյ մտածում էի, որ ես դեռ ոչինչ չը գիտեմ, որ ես պէտք է դեռ սովորեմ, ինձ հարկաւոր է նորից դաստիարակուել, որ ես շատ վատ եմ դաստիարակուած: Եւ ո՛չ նկարչութիւն գիտեմ, ո՛չ դաշնակ ածել: Եւ մինչև անգամ կար անելումն էլ թոյլ եմ: Եւ զրկուած եմ ամեն տեսակ ընդունակութիւններից: Պէտք է որ ինձ հետ ապրելը խիստ տաղտկալի լինի:

— Ղուբ անարդար էք դէպի ձեզ, առարկեցի ես. — դուք

ընթերցանութեամբ շատ էք պարապած, դուք զարգացած օրիորդ էք և ձեր խելքով...:

— Բայց ես խելօք եմ, հարցրեց նա այնպիսի մի անմեղ հետաքրքրութեամբ, որ ես ահամայ ծիծաղեցի, իսկ նա մինչև անգամ չը ժպտաց: — Եղբայր, ես խելօք եմ, հարցրեց նա Ղազինին:

Ղազինը ոչինչ չը պատասխանեց: Նա շարունակում էր աշխատել, անգողար փոփոխելով իւր վրձինները և ձեռքը միշտ վեր-վեր բարձրացնելով:

— Երբեմն ես ինքս էլ չը գիտեմ, թէ ի՞նչ է պտտվում իմ գլխում, — շարունակեց Եսեան նոյն մտախոհութեամբ: — Եւ, Եստուած է վկայ, շատ անգամ ինքս ինձանից վախենում եմ: Ե՛խ, ես կը ցանկայի... Երդեօք իրա՛ւ է, որ կանայք շատ չը պէտք է կարդան:

— Շատ չի հարկաւոր, բայց...

— Եսացէ՛ք, ի՞նչ պէտք է կարդամ. ի՞նչ պէտք է անեմ, ասացէ՛ք: Եւ կկատարեմ ձեր բոլոր ասածները, — աւելացրեց նա, անմեղ վստահութեամբ դառնալով դէպի ինձ:

Եւ ոչինչ չը կարողացայ մտածել իսկոյն և եթ պատասխանելու նրան:

— Բայց ձեզ ի՞նչ տաղտկութիւն չե՛մ պատճառում:

— Ե՛խ, այդ ինչ էք ասում, — սկսեցի ես:

— Ուրեմն շնորհակալ եմ, առարկեց նա: — Եւ կարծում էի թէ ձեզ համար նոյնպէս կարող եմ տաղտկալի լինել:

Եւ նա իւր փոքրիկ, ջերմ ձեռքով ամուր սեղմեց իմ ձեռքը:

— Ն.՛! այդ բոպէին գոչեց Ղազինը, — այս ֆօնը ի՞նչ խաւար չե՞:

Եւ մօտեցայ նրան: Եսեան վեր կացաւ և հեռացաւ:

ԺԲ.

Նա մի ժամից յետոյ վերադարձաւ. կանգնեց դռան շէմքում և ձեռքի շարժումով կանչեց ինձ իւր մօտ:

— Եսացէ՛ք խնդրեմ, եթէ ես մեռնէի դուք կ'ափսոսայի՞ք ինձ, — ասաց նա:

— Այդ ի՞նչեր էք մտածում դուք այսօր, բացականչեցի ես:

— Աս երևակայում եմ, թէ շուտով մեռնելու եմ: Արքեմն ինձ թուում է թէ իմ ամբողջ շրջապատը գնաս բարե է ասում ինձ: Աւելի լաւ է մեռնել, քան թէ ապրել այս կերպ... Ա՛խ, մի՛ նայէք ինձ վերայ այդպէս: Հուսատացէ՛ք ես չեմ կեղծում: Ապա թէ ոչ դարձեալ կ'սկսեմ վախենալ ձեզանից:

— Բայց մի՞թէ դուք ինձանից վախենում էիք:

— Ար ես այս աստիճան տարօրինակ եմ, հաւատացէ՛ք, այդ բանում մեղաւորը ե՛ս չեմ,—առարկեց նա:—Տեսնում էք, ես այժմ ծիծաղել ես չեմ կարողանում...

Մինչև երեկոյ նա մտազբաղ և տխուր էր: Մի ինչ-որ կատարվում էր նրա մէջ, որ ես հասկանալ չէի կարողանում: Նրա հայեացքը յաճախ կենտրոնանում էր ինձ վերայ և սիրտս կամացուկ սեղմվում էր այդ խորհրդաւոր հայեացքից: Ասեան հանդարտ էր երևում, բայց ես, նայելով նրա վերայ, միշտ ուզում էի ասել նրան, որ նա չը յուզուէի, չը վրդովուէի: Նրա վերայ նայելով՝ ես հրճվում էի: Նրա դալկացած դէմքի դժագրութեան մէջ, նրա անվստահ, դանդաղ շարժումներում ես տեսնում էի մի սրտառուչ, մի դիւթական չքնաղութիւն: Սակայն, չը զիտեմ ի՞նչ պատճառով, նա երևակայում էր, որ իմ տրամադրութիւնը խանդարուած է:

— Գիտէք ինչ կայ, ասաց նա բաժանուելուց մի փոքր առաջ.—ինձ տանջում է այն միտքը, որ դուք ինձ թեթեամիտ էք կարծում... բայց այսուհետե դուք միշտ հաւատացէ՛ք այն բանին, ինչ որ ես ձեզ կասեմ: միայն թէ դուք էլ ինձ հետ անկեղծ եղէք: Իսկ ես ձեզ միշտ ձշմարիտը կասեմ, ազնիւ խօսք եմ տալիս...

Այդ «ազնիւ խօսքը» դարձեալ ստիպեց ինձ ծիծաղել:

— Ա՛խ, մի՛ ծիծաղէք, շտապով վրայ բերեց նա—թէ չէ այսօր էլ ես ձեզ կասեմ այն, ինչ որ դուք երէկ ինձ ասացիք՝ փնչու էք ծիծաղում:—և մի փոքր լուութիւնից յետոյ, նա աւելացրեց—յիշում էք, դուք երէկ թեւրի մասին էիք խօսում... Ինձ վերայ արդէն թեւր են բուսել, բայց չը զիտեմ ո՞ւր թռչել:

— Ի՞նչպէս թէ ո՞ւր—ձեր առջև բաց են բոլոր ճանապարհները...

Ասեան ուղղակի և անթարթ նայեց աչքերիս:

— Դուք այսօր վատ կարծիքի էք իմ մասին, ասաց նա յօնքերը կիտելով:

— Ե՛ս, վատ կարծիքի՞ եմ, ձե՞ր մասին...

— Այդ ի՞նչ է, կարծես ջրում թրջուած հաւեր լինէք, ընդհատեց ինձ Գազինը.—ուզում էք երեկուայ պէս էլի մի վալ՝ս ածեմ, պարեցէք:

— Ո՛չ, ո՛չ, առարկեց Ասեան և ձեռքերն ամուր կցեց միմեանց,—Այսօր ես ամենեին չեմ պարել:

— Աս քեզ չեմ ստիպում, հանդարտուիր...

— Ամենեին չեմ պարել, կրկնեց նա դուռնատուելով:

«Մի՞թէ նա ինձ սիրում է», մտածում էի ես, մօտենալով Բէյնին, որ սրնթաց թաւալում էր իւր մռայլ ալիքները:

ՓԳ.

«Մի՞թէ նա ինձ սիրում է», հարցրի ես ինձ միւս օրը, հէնց որ զարթեցայ: Աս չէի ուզում նայել իմ ներքին աշխարհը: Աս զգում էի, որ նրա պատկերը, այդ «ակամայ և անվերջ ծիծաղող աղջկայ» պատկերը դրոշմուէլ էր սրտիս մէջ, և որ նրանից բաժանուել ես շուտով չէի կարող: Աս գնացի Լ., և ամբողջ օրն այնտեղ մնացի: Բայց Ասեային մի անգամ միայն տեսայ և այն թուուցիկ կերպով: Նա տկար էր, նրա գլուխը ցաւում էր: Նա մի բոպէ եկաւ ներքև, ճակատը թաշկինակով կապած, նիհար, գունատ, համարեա փակ աչքերով և թոյլ կերպով ժպտալով. «ոչինչ այս կանցնի, բոլորը կանցնի»—ասաց ու գնաց: Աս տխրեցի. ես զգացի մի ինչ-որ թախիծ, դատարկութիւն սրտիս մէջ: Աս երկար ժամանակ չէի ուզում հեռանալ այդ տեղից, սակայն էլ չը կարողանալով այդ օրը տեսնել նրան, բաւականին ուշ վերադարձայ տուն:

Հետեւեալ առաւօտը ես մի տեսակ կիսաերազական դրութեան մէջ էի: Աս ուղեցայ գործով զբաղուել, բայց չը կարողացայ: Ուղեցայ ոչինչ չը շինել և ոչ էլ մտածել... այդ ևս

չը յաջողուեց: Աս թափառում էի քաղաքում, վերադառնում էի տուն, նորից դուրս էի գալիս:

— Պ. Ն. դուք էք, յանկարծ իմ ետեւից հնչուեց մի մանկական ձայն:

Աս յետ նայեցի: Իմ առջև կանգնած էր մի երեխայ:

— Այս օրիորդ Annette-ն ուղարկեց, աւելացրեց նա, տալով ինձ մի նամակ:

Աս բացեցի նամակը: Ասեայի ձեռքն էր. գրուած էր շտապով և անկանոն:—Աս անպատճառ պէտք է տեսնեմ ձեզ, գրում էր նա ինձ,—այսօր ժամի չորսին եկէք աւերակների կողքին, ճանապարհի վերայ գտնուող քարաշէն մատուռի մօտ: Այսօր ես մի մեծ անզուշութիւն գործ դրի... Եկէք, ի սէր Աստուծոյ, դուք բոլորը կիմանաք... Նամակաբերին ասացէք—այո՛»

— Ի՞նչ պատասխան,—հարցրեց ինձ երեխան:

— Ասա՛ որ—այո՛, պատասխանեցի ես:

Երեխան պուկ եկաւ:

ԺԳ.

Աս ներս մտայ սենեակս, նստեցի և մտածմունքի մէջ ընկայ: Սիրտս սաստիկ տրոփում էր: Նայեցի ժամացոյցին. դեռ տասներկուսը չկար:

Յանկարծ դուռը բացուեց: Ներս մտաւ Պազինը:

Նրա դէմքը մռայլ էր: Նա բռնեց ձեռքիցս և ամուր սեղմեց: Պազինը խիստ յուզուած էր երևում:

— Ի՞նչ է պատահել ձեզ, հարցրի ես:

Պազինն աթոռ վերցրեց և նստեց իմ դիմացը:

— Երեք օր առաջ,—սկսեց նա կակաղելով և ակամայ ժպտալով,—ես ձեզ զարմացրի իմ արած պատմութիւնով. այսօր աւելի պէտք է զարմացնեմ: Մի ուրիշի հետ ես, անկասկած, չէի վստահանայ... այսպէս ուղղակի... Բայց դուք ազնիւ մարդ էք, դուք իմ մտերիմ բարեկամն էք, այնպէս չէ՛:—

Լսեցէք: Իմ քոյրը—Ասեան, սիրահարուած է ձեզ վերայ:

Աս ամբողջ մարմնով ցնցուեցի և վեր թռայ...

— Ձեր քոյրը, ասում էք...

— Այո՛, այո՛, ընդհատեց Պազինը:—Աս ձեզ ասում եմ նա խելագար է. նա ինձ էլ կըխելազարեցնէ: Բայց, բարեբաղդաբար, նա չը գիտէ ստախօսել:—Ե մեծ հաւատ է ընծայում ինձ:—Ա՛խ, որպիսի սրտի տէր է այդ աղջիկը... Բայց նա իրեն կը փչացնի, անպատճառ կը փչացնի:

— Դուք սխալվում էք, սկսեցի ես...

— Ո՛չ, չեմ սխալվում: Գիտէք, նա երէկ ամբողջ օր պառկած էր, ոչինչ չը կերաւ, և այդ մասին չը տրտնջաց անգամ... Նա երբէք չի տրտնջում: Չնայելով որ երկկոյտան դէմ նրան փոքր ինչ տաքութիւն տուեց, բայց ես ուշք չը դարձրի, կարծում էի կանցնի: Այսօր, գիշերուայ ժամի երկուսին ինձ զարթեցրեց մեր տանտիկինը՝—գնացէք ձեր քրոջ մօտ, ասաց նա,—նա իրեն վատ է զգում:—Աս վաղեցի դէպի Ասեայի ննջարանը և նրան գտայ դեռ չը հանուած, տենդային դրութեան մէջ, արտասուելիս: Նրա գլուխն այրվում էր, ատամները կծկծում էին: «Ի՞նչ է պատահել քեզ,—հարցրի ես,—հի՞ւանդ ես, ի՞նչ է»:—Նա խկոյն վզովս ընկաւ և սկսեց աղաչել, որ ես հեռացնեմ, տանեմ նրան այստեղեց և որքան կարելի է շուտով, եթէ ուզում եմ, որ նա ապրի, կենդանի մնայ... Աս ոչինչ չէի հասկանում, աշխատում էի հանդարտեցնել նրան... Բայց նրա հեկեկանքներն աւելի սաստկանում էին... և յանկարծ այդ հեկեկանքների միջեց ես լսեցի... Ե՛հ ինչ, երկարացնեմ, ես լսեցի, որ նա սիրում է ձեզ:—Հաւատացնում եմ ձեզ, որ մենք, մեր այս խելամիտ տեղովը երեւակայել չենք կարող, թէ որչափ խորն զգացուած է նա և որպիսի անհաւատալի օյժով նրա հոգին արտայայտում է այդ զգացմունքները: Նրանք յայտնվում են նրա մէջ նոյնպէս անսպասելի և անհաւաճելի, որպէս որտան ու կայծակը:—Դուք, իրաւ է, շատ դուրեկան մարդ էք, շարունակեց Պազինը—բայց թէ ինչու նա ձեզ այդ աստիճան սիրում է—ես այդ, խոստովանած, չեմ հասկանում: Ինքն ասում է, որ հէնց առաջին հայեացքից սիրաբ կպիլ է ձեզ: Նրա համար էլ նա այս օրերս, լալիս էր, երբ հաւատացնում էր ինձ, թէ բացի ինձանից ոչ ոքին սիրել չէ կամենում:—Նա այնպէս է երեւակայում, թէ դուք ատում էք նրան, թէ դուք երեւի գիտէք, նրա ո՛վ լինելը: Նա ինձ հարցրել է այդ մասին, թէ արդեօք ես խօ չե՛մ պատմած

ձեզ նրա կեանքը:—Նս, ի հարկէ, ասացի, որ ոչ: Բայց նրա նրբամտութիւնը—Օ, Տէրն աղատի: Նա միայն մի բան է ցանկանում—հեռանալ իսկոյն և եթ: Նս մինչև առաւօտ նստած էի նրա կողքին: Նւ նա միայն այն ժամանակ քնեց, երբ խօսք առաւ ինձանից, որ մենք վաղն այլևս այստեղ չենք լինիլ:— Նս մտածեցի, երկար մտածեցի և վճռեցի այդ մասին խօսել ձեզ հետ: Իմ կարծիքով, Ստեան արդարացի է: Ամենից լաւն այն է՝ երկուսով էլ հեռանանք այստեղից: Նս հէնց այսօր նրան կ'հեռացնէի այստեղից, եթէ մի մտք, որ յանկարծ ծագեց իմ գլխում, յետ չը կանգնեցնէր ինձ: Շատ կարելի է... ո՞վ գիտէ, քոյրս ձեզ դուր է գալիս:—Եթէ այդպէս է, էլ ի՞նչու հեռացնեմ նրան:—Նւ ահա ես ամօթանքը մի կողմը թողած՝ վճռեցի. .. Մանաւանդ որ մի քանի բաներ էլ նկատած եմ... Նս վճռեցի... իմանալ ձեզանից... Խեղճ Պազինը շփոթուեց: Ներեցէք, խնդրեմ, աւելացրեց նա—ես սովոր չեմ այդպէս ծամծմելով խօսելու:

Նս բռնեցի նրա ձեռքից:

Դուք ուզում էք իմանալ հաւանում եմ ես ձեր քրոջը, թէ ոչ,—արտասանեցի ես հաստատուն ձայնով:—Այո, ես նրան հաւանում եմ:...

Պազինը նայեց ինձ վերայ:—Բայց, դուք խօ չէք ամուսնանալ նրա հետ,—ասաց նա կակաղելով:

— Ի՞նչ պատասխան կը կամենայիք որ ես տայի ձեր այդ հարցմունքին: Ինքնիրդ դատեցէք, կարո՞ղ եմ ես այժմ:...

— Գիտեմ, գիտեմ, ընտհատեց Պազինը:—Նս ոչ մի իրաւունք չունեմ պատասխան պահանջելու ձեզանից, և իմ հարցը—անպատշաճութիւնից էլ վեր էր:—Բայց ի՞նչ անել: Արակի հետ հանաք անել չի կարելի: Դուք Ստեային չէք ձանաչում: Նա կարող է հիւանդանալ, փախչել տեսակցութիւն նշանակել... Մի ուրիշը կարող էր այդ բոլորը թազանել և սպասել—բայց նա այդ չի կարող: Այդպիսի մի բան առաջին անգամն է պատահում նրան և հէնց ցաւալին էլ այդ է: Եթէ դուք տեսնէիք, թէ որպէս նա այսօր օտնորիս տակ ընկած հեծեծում էր, այն ժամանակ կ'իմանայիք իմ այս չափ վախենալուս պատճառը:

Նս մտածմունքի մէջ ընկայ: «Տեսակցութիւն նշանակելը»,—

Պազինի այդ խօսքերը ծակեցին իմ սիրտը: Ինձ ամօթալի թուաց նրա այդ ազնիւ անկեղծութեանն անկեղծութեամբ չը պատասխանեք:

— Այո,—ասացի ես վերջապէս,—դուք իրաւացի էք: Մի ժամ առաջ ես ձեր քրոջից նամակ ստացայ: Ահա նա:

Պազինն առաւ նամակը, շտապով աչքի անցկացրեց և ապա ձեռքերը ցած թողեց ծնկների վերայ: Նրա դէմքին նկարուած զարմանքի արտայայտութիւնը շատ ծիծաղելի էր, բայց ո՞ւմ մտքովն էր անցնում այդ բոպէին ծիծաղել:

— Դուք, կրկնում եմ, ազնիւ մարդ էք,—ասաց նա,—բայց, լաւ, ի՞նչ անել այժմ: Ի՞նչպէս վարուել: Նա ինքը կամենում է հեռանալ այստեղից, և միևնոյն ժամանակ նամակ է գրում ձեզ և կշտամբում է իրեն իւր անզգուշութեան համար... Ախար ե՞րբ նա ժամանակ դտաւ այդ նամակը գրելու: Ի՞նչ է ուզում նա ձեզանից:

Նս հանդարտեցրի նրան և մենք սկսեցինք, որքան հնարաւոր էր, սառնասրտութեամբ խորհել, թէ ի՞նչպէս պէտք էր վարուել:

Ահա վերջապէս ի՞նչ եղբակացութեան եկանք: Ատանգից խոյս տալու համար, ես պէտք է զնայի տեսակցելու Ստեայի հետ և անկեղծութեամբ բացատրէի նրան բոլորը: Իսկ Պազինը պէտք է տանը նստէր և իրեն այնպէս ձևացնէր, որպէս թէ նամակի մասին ոչինչ չը գիտէ: Նրեկոյեան մենք դարձեալ պէտք է հանդիպէինք իրար:

— Հաստատ յոյս ունեմ ձեզ վերայ,—ասաց Պազինը և ձեռքս ամուր սեղմեց:—Ինչպեցէք թէ՛ նրան և թէ՛ ինձ: Բայց այսու ամենայնիւ մենք վաղը կը հեռանանք,—աւելացրեց նա՝ ոտքի կանգնելով,—որովհետեւ գիտեմ որ դուք նրա հետ չէք ամուսնանալ:

— Մինչև երեկոյ ինձ ժամանակ տուէք,—առարկեցի ես:

— Շատ բարի: Բայց, գիտեմ, դուք չէք ամուսնանալ:

Նա զնաց, իսկ ես դահլոյսի վերայ ընկայ և աչքերս փակեցի: Գլուխս պտտվում էր, բազմաթիւ տպաւորութիւններ միանգամից ներս հոսեցին տաքացած ուղեղիս մէջ: Նս զայրանում էի Պազինի սրտաբացութեան վերայ, ես զայրանում էի Ստեայի վերայ: Նրա սէրն ինձ և՛ ուրախացնում, և՛ խռովում

էր: Աս չէի կարողանում հասկանալ թէ ի՞նչն էր ստիպել նրան ամեն ինչ պատմելու եղբորը: Առտափոյթ, համարեա վայրկենական վճռականութեան անհրաժեշտութիւնն ինձ տանջում էր....

«Ամուսնանալ տասնեօթը տարեկան աղջկայ հետ, այն էլ այդպիսի մի բնաւորութիւն ունեցող աղջկայ հետ, ո՞չ ի՞նչ պէս կարելի է», — ասացի ես, ոտքի կանգնելով:

Փե.

Նշանակուած ժամին ես անցայ Քէյնը և առաջին մարդը, որին պատահեցի դիմացի ափում, այն երեխան էր, որն առաւօտեան եկել էր ինձ մօտ: Նա, ըստ երեւոյթին, ինձ էր սպասում:

— Օրիորդ Annette-ից, — շնջաց նա և տուաւ ինձ մի ուրիշ նամակ:

Ասեան գրում էր, որ տեսակցութեան տեղը փոխել է: Աս պէտք է գնայի ժամուկէսից յետոյ: Բայց ո՞չ թէ մատուռի մօտ, այլ Փրատու Առիղէի տունը. պէտք է բաղխէի ցածրի դուռը և բարձրանայի երրորդ յարկը:

— Վարձեալ այո՞, — հարցրեց երեխան:

— Այո՞, — կրկնեցի ես, և քայլերս ուղղեցի դէպի Քէյնի եզերքը: Տուն վերադառնալ չէի կարող — ուշ էր: Փողոցներում թափառել էլ չէի ուզում: Վաղաքից գուրս, պարսպի ետեւը գտնվում էր մի փոքրիկ այգի, ուր դարստած էին սեղաններ զարեջրասէրների համար. այնտեղ կառուցուած էր և՛ մի երկայն փայտաշէն ծածք կեղծ խաղալու համար: Աս ներս մտայ այդտեղ: Մի քանի արդէն տարիքն առած զերմանացիներ կեղծ էին խաղում: Փայտէ գնդակները թխկթխկալով ու ձայներ հանելով զլորվում էին. իսկ ժամանակ առ ժամանակ լսվում էին զովաբանական բացականչութիւններ: Պեղեցկատեսիլ սպասաւորուհին արտասուեալսառն աչքերով մի բաժակ զարեջուր բերեց ինձ համար: Աս նայեցի նրա դէմքին: Նա շտապով երեսը շուռ տուեց և հեռացաւ:

— Այո՞, այո՞, — բացականչեց այնտեղ նստողներից մի հաստոիկ ու կարմրաթուշ դերմանացի, — մեր Պաննիսենն

այսօր սաստիկ զայրացած է: Նրա փեսացուին զինուոր են տարել: — Աս նայեցի նրա վերայ, նա կուչ էր եկել անկիւնում և ձեռքով ծածկել էր իւր թուշը: Արտասուքի կաթիլները միմեանց ետեից զլորվում էին նրա մատների վերայով: Ովոր զարեջուր պահանջեց: Նա բերեց բաժակով զարեջուրը և դարձեալ վերադարձաւ իւր տեղը: Նրա տխրութիւնը և՛ ինձ վերայ ազդեց: Աս սկսեցի մտածել ինձ սպասող տեսակցութեան մասին. բայց իմ մտածմունքները բազմահոգ, տխուր մտածմունքներ էին: Ուրախ սրտով չէի գնում ես Ասեայի հետ տեսակցելու և ոչ էլ վիճակուած էր ինձ այնտեղ փոխադարձ սիրոյ խնդ ու հրճուանքին անձնատուր լինելու: Ո՞չ ինձ վիճակուած էր հաստատ մնալ տուած խօսքիս, կատարել ինձ վերայ գրուած ծանր պարտքը: «Նրա հետ հանաք անել չի կարելի» — Վաղինի այդ խօսքերը, որպէս նետեր, ցցուեցան սրտիս մէջ: Բայց մի՞թէ երեք օր առաջ, այս նաւակում, ալիքների հետ թռչկոտող այս նաւակում չէր, որ ես տառապում էի բազրի ծարաւով: Նա այժմ հնարաւոր, մատչելի էր դարձել — բայց ես տատանման մէջ էի, ես յետ էի մղում, ես պէտք է յետ մղէի նրան ինձանից.... Նրա անակնկալ յայանուիւն ինձ խռովում էր: Նոյն ինքն Ասեան իւր կրակոտ գլխով իւր անցեալով, իւր դաստիարակութեամբ, — այդ զրաւելչ բայց տարօրինակ արարածը, խոստովանում եմ, ինձ երկիւղի մէջ էր ձգում: Նրկար ժամանակ իմ մէջ զգացմունքների պատերազմ էր: Նշանակուած ժամը մօտենում էր: «Աս չեմ կարող նրա հետ ամուսնանալ», — վերջապէս վճռեցի ես: — «Նա չի իմանալ, որ ես նոյնպէս սիրում էի նրան»:

Աս վեր կացայ և մի աալիւր գնելով խեղճ Պաննիսենի ձեռքը, (նա մինչև անգամ շնորհակալութիւն էլ չարաւ) քայլերս ուղղեցի դէպի Փրատու Առիղէի բնակարանը: Նրեկոյեան ստուերներն արդէն սփռվում էին օդի մէջ և երկնքի նեղ շերտը, որ կամար էր կապած մթին փողոցի վերայով, կարմրին էր տալիս վերջալուսի փայլով: Աս թոյլ կերպով բաղնեցի դուռը. նա իսկոյն բացուեց: Աս ոտքս ներս դրի շէմքից և իմ աչքին ներկայացաւ կատարեալ խաւար:

— Այս կողմը, — լսելի եղաւ մի պառաւական ձայն: — Ձեզ սպասում են:

Նս խարխափելով մի երկու քայլ առաջ գնացի և մէկի ոսկրացած ձեռքը բռնեց իմ ձեռքից:

— Այս դ՞ուք էք, Փրատու Լուսիդէ,—հարցրի ես:

— Այո՛, պատասխանեց ինձ նոյն ձայնը—ես եմ, իմ սիրուս նիկս:—Պառաւր մի ոլորապտոյտ սանդուղքով տարաւ ինձ աւելի վեր, և ապա կանգ առաւ երրորդ յարկի փոքրիկ տափարակի վերայ: Նեղ լուսամուտից դուրս թափանցող աղօտ լուսոյ առջև ես տեսայ քաղաքապետի որբեւայրի կնոջ կնձռոտած դէմքը: Անսխորժ և խարդախ ժպտոք, որ այդ ըրպէսին նկարուած էր այդ դէմքի վերայ, ցնցում էր պառաւի փոս ընկած շրթունքները և կուչ էր ածում նրա պղտոր աչքերը: Նա ինձ ցոյց տուեց մի փոքրիկ դուռը: Ձեռքի մի ցնցողական շարժումով բաց արի ես նրան և ներս մտնելով, դարձեալ փակեցի ետեւիցս:

ՓՊ.

Փոքրիկ սենեակը, ուր ես ներս մտայ, բաւականին մութն էր: Նս խոկոյն չը նկատեցի Ասեային: Նրկայն շալի մէջ փաթաթուած, նա նստած էր պատուհանի մօտ, աթոռի վերայ և, որպէս վախեցած թռչնիկ, զլուխը շուռ էր տուել ու թազցրել շալի տակ: Նա շնչում էր ստէպ-ստէպ և ամբողջ մարմնով դողում էր: Նս անչափ ցաւեցի նրա վերայ: Նս մօտեցայ նրան: Նա աւելի շուռ տուեց զլուխը...

— Ա՛ննա Նիկոլայեմնա,—ասացի ես:

Նա յանկարծ ամբողջ մարմնով շտկուեց, ուղեց նայել ինձ, բայց չը կարողացաւ. Նս բռնեցի նրա ձեռքից, նա սառն էր և կարծես անզգայ՝ ընկած էր ահիս մէջ:

— Նս ուզում էի... սկսեց Ասեան, աշխատելով ժպտալ, բայց նրա գունատուած շրթունքները չէին հնազանդվում նրան:—Նս ուզում էի... Ո՛չ չե՛մ կարող,—ասաց նա և լռեց:

Արդարև, իւրաքանչիւր խօսքի վերայ նրա ձայնն ընդհատվում էր:

Նս նստեցի նրա կողքին:

— Ա՛ննա Նիկոլայեմնա,—կրկնեցի ես և նոյնպէս չը կարողացայ ոչինչ աւելացնել:

Տիրեց լուռութիւն: Նս շարունակ բռնած էի Ասեայի ձեռքից և նայում էի նրա վերայ: Նա, առաջուայ նման, դարձեալ կուչ էր գալիս, դժուարութեամբ էր շունչ քաշում և կամացուկ կծոտում էր ներքին շրթունքը, որպէս զի լաց չը լինի, որպէս զի զսալի աչքերի մէջ կիտուած արցունքները... Նս նայում էի նրա վերայ: Նրա երկիւղալից անշարժութեան մէջ նկատվում էր մի տեսակ սրտաշարժ անօգնականութիւն: Նա հազիւ հազ մօտեցաւ աթոռին և ուղղակի ընկաւ նրա վերայ, կարծես յոգնած լինէր: Սիրտս տեղնուտեղը հալուեց...  
— Ասեան,—շնչացի ես, հազիւ լսելի ձայնով...

Նա կամաց բարձրացրեց իւր աչքերը և նայեց ինձ վերայ... Օ՛, կանացի հայեանք, սիրահար կնոջ հայեանք, ո՞վ կարող է նկարագրել քեզ: Նրա աչքերը և՛ աղբրսում էին, և՛ հարցնում էին. նրանք արտայայտում էին և՛ անձնանուիրութիւն, և՛ ապաւինութիւն... Նս չը կարողացայ դիմադրել նրանց թովիչ ազդեցութեանը: Իմ ամբողջ մարմնով անցաւ մի մեղմ կրակ, ծակծկելով ինձ իւր այրող փշերով: Նս թեքուեցի և կամաց կայ նրա ձեռքին...

Լսուեցաւ մի դողդոջիւն ձայն, որ նման էր ընդհատուող հտուաչանքի. և ես զգացի, թէ որպէս մի թոյլ և, տերևի պէս, դողդոջիւն ձեռք շփուեցաւ մազերիս: Պլուխս վեր բարձրացրի և տեսայ նրա պատկերը: Օ՛, որպէս կերպարանափոխուեց նա յանկարծ: Նրա վերայից չբացաւ երկիւղի արտայայտութիւնը, հայեանքը գնաց, սուզուեց ուր-որ հեռուն և ինձ ևս սկսեց հրապուրել, քարշել իւր ետեւից. շրթունքները մի փոքր բացուեցին, ճակատը, որպէս մարմարիոն, գունաթափուեց, իսկ գանգուրները, կարծես քամուց մղուած, կիտուեցին գլխի ետեւը: Նս մոռացայ ամեն բան: Նս նրան քաշեցի դէպի ինձ — նրա ձեռքը խոնարհութեամբ հպատակուեցաւ ինձ. ձեռքին հետևեց ողջ մարմինը, շալը վայր ընկաւ ուսերից և նրա զլուխը կամաց-կամաց խոնարհուեց կրծքիս վերայ, խոնարհուեց իմ ախտաբորբոք շրթունքներին տակ...

— Նս ձե՛րն եմ... շնչաց նա, հազիւ լսելի ձայնով:

Իմ ձեռքերն արդէն սահում էին նրա իրանի շուրջը... Բայց յանկարծ իմ միտն ընկաւ Պազինը և այդ մտաբերութիւնը, որպէս կայծակ, փայլատակեց իմ ուղեղում:—Ի՛նչ ենք

անում մենք,—բացականչեցի ես և ցնցուկով՝ ետ քաշուեցայ....  
Չիր եղբայրը.... չէ՞ որ նա ամեն բան զիտէ.... Նա զիտէ, որ  
ես եկել եմ ձեզ հետ տեսակցելու:

Նսեան կամաց-կամաց նստեց աթոռի վերայ:

— Այո, շարունակեցի ես վեր կենալով և սենեակի միւս  
անկիւնը քաշուելով:—Չիր եղբայրը բոլորը զիտէ.... Նս պէտք  
է նրան ամեն բան պատմել:

— Պէտք է,—շնչաց նա անորոշ ձայնով:

Նրեում էր, որ նա դեռ ուշքի գալ չէր կարողանում և  
դժուարութեամբ էր ինձ հասկանում:

— Այո, այո,—կրկնեցի ես մի տեսակ բարկութեամբ—և  
այդ բանում մեղաւորը դուք էք, միմիայն դուք:—Կնչու դուք  
ինքներդ մերկացրիք ձեր գաղանիքը: Մ՞ի էր ստիպում ձեզ ա-  
մեն բան պատմել եղբորը: Նա այսօր ինքն ինձ մօտ էր և  
պատմեց ինձ ձեր մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը:

Նս աշխատում էի չը նայել Նսեայի վերայ և մեծ-մեծ  
քայլերով անցուդարձ էի անում սենեակում:

— Այժմ ամեն բան կորած է, ամե՛ն բան, ամե՛ն բան:

Նսեան կամեցաւ վեր կենալ աթոռի վերայից:

— Սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք, խնդրում եմ ձեզ,—բացա-  
կանչեցի ես:—Դուք գործ ունէք ազնիւ մարդու հետ—այո՛,  
ազնիւ մարդու հետ: Սասցէ՛ք, ի սէր Աստուծոյ, ի՞նչ բան  
վրդովեց ձեզ: Մի՞թէ դուք որ և է փոփոխութիւն նկատե-  
ցիք իմ մէջ: Նս ոչինչ ծածկել չէի կարող ձեր եղբորից, երբ նա  
այսօր եկաւ ինձ մօտ:

Այս ի՞նչ եմ ասում,—մտածում էի ինքս ինձ և այն  
միտքը, որ ես անբարոյական խաբեբայ էի, որ Պաղինին յայտ-  
նի էր մեր տեսակցութիւնը, որ ամեն ինչ խանդարուած, մեր-  
կացրած և խճճուած էր — այդ միտքը շարունակ թշուա՛մ,  
աղմկում էր գլխիս մէջ:

— Նս չէի կանչել եղբորս, — լսուեցաւ Նսեայի երկչոտ  
շնչոցը:—Նա ինքը եկաւ:

— Բայց տեսէ՛ք, թէ ինչ արիք դուք,—շարունակեցի ես:  
Նւ այժմ դուք ուզում էք թողնել այս քաղաքը:

— Այո, ես պէտք է հեռանամ այստեղից,—նոյն մեղմու-

թեամբ ասաց նա,— և հէնց դրա համար էլ խնդրեցի ձեզ դալ  
այստեղ, որպէս զի վերջին մնաս բարեն ասե՛նք միմեանց:

— Նւ դուք կարծում էք, որ ինձ համար հե՛շտ կլինի  
բաժանուել ձեզանից,—առարկեցի ես:

— Հապա էլ ի՞նչու ամեն ինչ յայտնեցիք եղբորս,—տարա-  
կուսած կրկնեց Նսեան:

— Ասում եմ ձեզ, որ ես այլապէս վարուել չէի կարող:  
Նիթէ դուք ինքներդ չը մասնէիք ձեզ....

— Նս փակուեցի սենեակումս,—առարկեց նա պարզամտու-  
թեամբ:—Նս չը զիտէի, որ իմ տանտիկինն ուրիշ բանալիք  
ունի....

Այդ անմեղ ներողութիւնը, որ այդ բոպէին արտասանե-  
ցին նրա շրթունքները, քիչ մնաց այն ժամանակ բարկացնէր  
ինձ.... իսկ այժմ, այժմ ես առանց խղճահարութեան չեմ  
կարողանում յիշել նրան: Խե՛ղճ, ազնի՛ւ և անկե՛ղծ մա-  
նուկ:

— Այժմ ամեն ինչ վերջացած է,—նորից սկսեցի ես:—Ա-  
մե՛ն ինչ: Այժմ մենք պէտք է բաժանուենք:

Նս ծածկաբար նայեցի Նսեայի վերայ.... Նրա դէմքը ստէպ,  
ստէպ շառագունվում էր: Նա (ես այդ զգում էի) և՛ ամա-  
չում էր, և՛ սարսափում էր: Նս ինքս էլ այնպէս էի խօսում  
ու մանզալիս, կարծես ջերմախտից բռնուած լինէի:

— Դուք թոյլ չը տուիք զարգանալ այն զգացմունքին, որ  
նոր էր սկսում հասունանալ,՝ դուք ինքներդ խախտեցիք մեր  
կապը, դուք հաւատ չէիք բնծայում ինձ, դուք կասկածում  
էիք իմ վերաբերութեամբ....

Մինչև որ ես խօսում էի, Նսեան աւելի և աւելի թեք-  
վում էր դէպի առաջ—և յանկարծ՝ նա ծնկաչոք ընկաւ դե-  
տին, գլուխը կախեց ձեռքերի վերայ և սկսեց հեկեկալ: Նս  
մօտ վազեցի, աշխատում էի ոտքի կանգնեցնել նրան, բայց նա  
թոյլ չէր տալիս: Պանանց արցունքներին ես դիմանալ չեմ  
կարողանում: Նրանց տեսնելիս, ես ինձ կորցնում եմ:

— Ա՛ննա Նիկողայիվնա, Նսեան, —շարունակ պնդում էի ես:  
—Խնդրում եմ դադարեցէ՛ք, ի սէր Աստուծոյ, դադարեցէ՛ք....

Նս նորից բռնեցի նրա ձեռքից.... Բայց ո՛րքան մեծ եղաւ  
իմ զարմանքը, երբ նա յանկարծ վեր թռաւ իւր տեղից, կայ-

ծակի արագութեամբ նետուեցաւ դէպի դուռը և անյայտացաւ:

Մի քանի րոպէից յետ, երբ Ֆրանու Ղուիզէն ներս մտաւ սենեակը, ես, որպէս շանթահար եղած՝ դեռ նոյն դրութեան մէջ կանգնած էի սենեակի հէնց մէջ տեղում: Աս չէի հասկանում, թէ ի՞նչպէս կարող էր մեր տեսակցութիւնն այդպէս շուտով և այդպէս յիմար կերպով վերջանալ, մինչդեռ ես մի հարիւրերորդական մասն անգամ չէի յայտնած այն ամենի, ինչ որ ուզում էի յայտնել, ինչ որ պէտք է յայտնէի. մինչդեռ ես ինքս էլ չը գիտէի, թէ ի՞նչ էլք, ի՞նչ վախճան կարող էր ունենալ այդ տեսակցութիւնը....

— Օրիորդը գնաց, — հարցրեց ինձ Ֆրանու Ղուիզէն, իւր դեղին յոնքերը բարձրացնելով մինչև պիտակը:

Աս յիմարի պէս նայեցի նրա վերայ — և իսկոյն դուրս եկայ:

ՓԷ.

Քաղաքից դուրս գնալով, ես ուղղակի դիմեցի դէպի դաշտը: Բարկութիւնը, կատաղե բարկութիւնը կոծում էր սիրտս: Աս սկսեցի անվերջ նախատել ինձ: Ի՞նչպէս չը կարողացայ ես հասկանալ այն պատճառը, որ ստիպել էր Ասեային փոխելու մեր տեսակցութեան տեղը, ի՞նչպէս չը գնահատեցի ես այն ծանր քայլը, որ նա արել էր՝ զալով այդ պառաւի մօտ, ի՞նչպէս ձեռքիցս թողե ես նրան: Ա՛յ դեռ այնքան ոյժ և հոգեկան քաջութիւն ունեցայ, որ նրա հետ առանցնացած, մեն-մենակ լինելով այդ խուր, կիսախաւար սենեակում, ետ մղեցի նրան ինձանից, մինչև անգամ սկսեցի կշտամբել նրան.... Իսկ այժմ նրա պատկերը հալածում էր ինձ, ես ներումն էի խնդրում նրանից, և յիշելով Ասեայի գունատ դէմքը, նրա թաց, երկիւզարի աչքերը, նրա խիտ մազերը, որոնք սփռուած էին խոնարհուած պարանոցի վերայ, նրա գլխի թեթեւ շփումն իմ դանդուրների հետ, յիշելով այդ բոլորը — ես այրվում էի: «Աս ձե ըն եմ»... անդադար լսում էի նրա շնչոցը: «Բայց ես խղճով վարուեցի» — հաւատացնում էի ինքս ինձ.... Սո՛ւտ է: Մի՞թէ իմ ցանկացածը այդպիսի մի վախճան էր: Մի՞թէ ես կարող

եմ բաժանուել Ասեայից. մի՞թէ ես կարող եմ զրկուել նրանից: Օ՛, որքան անմիտ եմ, որքան անմիտ եմ, — կրկնում էի ես զայրացած....

Սակայն զիշերն արդէն վըայ էր հասնում: Աս մեծ-մեծ քայլերով դիմեցի դէպի այն տունն, ուր ապրում էր Ասեան:

ՓԸ.

Ինձ դիմաւորեց Պազինը:  
— Արդեօք տեսնօք քրոջս, — հարցրեց նա հեռուից, դեռ չը մօտեցած:  
— Մի՞թէ նա տանը չէ, — հարցրի ես.  
— Ո՛չ:  
— Ուրեմն նա դեռ չի էլ վերադարձել:  
— Ո՛չ: Աս մեղաւոր եմ, — շարունակեց Պազինը: — Աս չը կարողացայ համբերել: Հակառակ մեր պայմանի, գնացի մատուռի մօտ: Նա այնտեղ չէր: Նշանակում է, նա չի՞ եկել:  
— Նա մատուռի մօտ չէր:  
— Դ՞ուք էլ չը տեսաք նրան:  
Աս պէտք է խոստովանէի, որ նրան տեսել եմ:  
— Ո՞րտեղ:  
— Ֆրաւ Ղուիզէի մօտ: — Մի ժամ առաջ բաժանուեցի նրանից, — աւելացրի ես: — Աս համոզուած էի, որ նա արդէն տուն վերադարձած կլինի:  
— Սպասենք, — ասաց Պազինը:  
Մենք ներս մտանք սենեակը և նստեցինք միմեանց կողքին: Մենք լուռ էինք: Արկուսիս դրութիւնն էլ շատ անհամ էր: Անդադար դէս ու դէն էինք նայում, աչքներս զցում էինք դռանը, ականջ էինք դնում: Վերջապէս Պազինը վեր կացաւ:  
— Այս անտանելի է, բացականչեց նա: — Սիրտս չէ հանդարտվում: Նա իմ հոգին կը հանէ, Աստուած է վկայ.... գնանք, փնտռենք նրան:  
Մենք դուրս եկանք: Պուրան արդէն բոլորովին մթնել էր:  
— Ի՞նչ խօսեցիք դուք նրա հետ, — հարցրեց Պազինը՝ զլիարկն աչքերին քաշելով:  
— Մեր տեսակցութիւնը տեւեց ընդամենը հինգ րոպէ,

պատասխանեցի ես:—Նս խօսեցի նրա հետ, որպէս պայմանա-  
ւորուել էինք:

— Գլխէք ինչ կայ,—առարկեց նա,—աւելի լաւ է մենք  
բաժանուենք միմեանցից. այդպիսով մենք աւելի շուտով կը  
գտնենք նրան:—Այսուամենայնիւ մի ժամից յետոյ եկէք այս-  
տեղ:

ԺԹ.

Նս խաղողի այգեստանից շուտափոյթ իջայ ներքև և վա-  
զեցի դէպի քաղաքը: Ետապով անցայ բոլոր փողոցները, նա-  
յեցի ամենուրեք, ներս նայեցի մինչև անգամ Պրատու Առի-  
զէի պատուհաններից, վերադարձայ դէպի Րէյնը և ավնիվայը  
վազեցի... Տեղ-տեղ ինձ հանդիպում էին կանայք, բայց Ասեան  
ոչ մի տեղ չէր երևում: Այժմ իմ սիրտը կռծողը ոչ թէ զայ-  
րոյթն էր, ոչ — ինձ տանջում էր մի գաղտնի երկիւղ, սա-  
կայն իմ զգացածը միայն երկիւղ չէր... ես զգում էի և՛  
զղջումն, զգում էի ամենապրող ցաւակցութիւն, ես զգում էի  
սէր—այո՛, ամենաքնքոյշ սէր: Նս չը գիտէի ինչ անել: Գլխ-  
շերային պատող խաւարի մէջ ես կանչում էի Ասեային, կան-  
չում էի նախ կիսաձայն, յետոյ աւելի և աւելի բարձր ձայ-  
նով: Նս հարիւր անգամ կրկնեցի, որ սիրում եմ Ասեային,  
ես երգում էի երբէք չը բաժանուել նրանից: Նս ամեն բան  
կտայի աշխարհիս երեսին, որպէս զի դարձեալ բռնէի նրա սառը  
ձեռքը, դարձեալ լսէի նրա մեղմ ձայնը, դարձեալ տեսնէի նրան  
իմ առջև... Նս այնքան մօտիկ էր, նա եկել էր ինձ մօտ լի  
վստահութեամբ, լի սրտի և զգացմունքների անմեղութեամբ:  
Նս իւր անձեռնամխելի մատաղհասութիւնը բերել էր ինձ...  
և ես նրան չը սեղմեցի իմ կրծքին, ես զրկեցի ինձ նրա  
քաղցրալիք դէմքը տեսնելու երջանկութիւնից, տեսնելու, թէ  
որպէս այդ դէմքը կ'ծաղկէր ու կ'փթթէր հիացմունքի անդոր-  
րութեամբ ու բերկրանքով... Այդ միտքն ինձ խելագարեց-  
նում էր.

«Մեր կարող էր նա դնալ ինչ արաւ նա իրեն», բացական-  
չում էի ես, սրտնեղուելով անզոր յուսահատութիւնից... Յան-  
կարծ գետի հէնց եղերքին մի ինչ-որ սպիտակին տուեց: Այդ

տեղն ինձ ծանօթ էր—այդտեղ գտնվում էր սրանից տասնեօթը  
տարի առաջ ջրում խեղդուած մի մարդու գերեզման, որի վե-  
րայ անկուած էր կիսով չափ հողի մէջ թաղուած մի քարեայ  
խաչ շատ հին արձանագրութեամբ: Սիրտս հէնց տեղն ու  
տեղը հալուեց...: Նս վազեցի խաչի մօտ, սպիտակ կերպարանքը  
չքացաւ: «Ասեան»,—գոչեցի ես: Իմ վայրենի ձայնից ես ինքս  
վախեցայ, բայց պատասխան տուող չեղաւ...:

Նս վազեցի զնալ իմանալու, մի գուցէ Գազինը գտել էր  
նրան:

Ժ.

Երագ-արագ բարձրանալով այգեստանի նեղ շաւղով, ես  
տեսայ Ասեայի սննեակում ճրագի լոյս... Այդ բանը ինձ փոքր  
ինչ հանդարտեցրեց:

Նս մօտեցայ տանը: Ներքևի դուռը փակ էր. թխկթխ-  
կացրի: Ներքին յարկի խաւար պատուհանը զգուշութեամբ բա-  
ցուեց և երևաց Գազինի գլուխը:

— Գառնք,—հարցրի ես:

— Նս վերադարձաւ,—պատասխանեց ինձ Գազինը շշու-  
տով:—Նս իւր սննեակումն է և հանվում է: Ամեն ինչ կար-  
գին է:

— Փնօք Աստուծոյ,—բացականչեցի ես անպատմելի ուրա-  
խութեամբ,—փառք Աստուծոյ: Այժմ շատ լաւ է: Բայց զի-  
տէք, մեզ հարկաւոր է դարձեալ խորհրդակցել միմեանց հետ:

— Մի ուրիշ անգամ,—առարկեց նա, կամացուկ դէպի  
իրեն քաշելով լուսամուտի փեղկը, — մի ուրիշ անգամ, իսկ  
այժմ մնաք բարեաւ:

— Յվաղը, ասացի ես:—Աչալը ամեն ինչ կը վճռուի:

— Մնաք բարեաւ,—կրկնեց Գազինը:

Պատուհանը փակուեցաւ:

Բայց ես քիչ մնաց պատուհանը բաղխէի: Նս ուզում էի  
հէնց իսկոյն ասել, որ խնդրում եմ նրա քրոջ ձեռքը: «Բայց  
այս տեսակ հարսնախօսութիւն, այսպիսի մի ժամին... Մնայ  
մինչև էգուց», մտածեցի ես,—էգուց ես բազդաւոր կլինեմ...

Եգուց ես բազդաւոր կլինեմ! Բայց բազդի համար չկայ

էգուց, նրա համար չկայ—և՛ երէկ: Նա չի յիշում անցիալը, չի մտածում ապագայի մասին: Նա ունի ներկայ—և այն էլ ոչ թէ մի օր, այլ մի ակնթարթ:

Նս չեմ յիշում, թէ ի՞նչպէս հասայ մինչև Չ.: Ինձ տանողը ոչ ոսներն էին և ոչ էլ—նաւակը: Սարծես ինձ սլացնում էին մի զոյգ լայն և ուժեղ թևեր: Նս անցայ այն թփի մօտով, ուր հրգում էր սոխակը: Նս կանգ առայ և երկար լսում էի: Ինձ թուում էր թէ նա հրգում էր իմ սերը և իմ բաղձաւորութիւնը:

III.

Միւս առաւօտ, երբ ես սկսեցի մօտենալ ծանօթ տնակին, ինձ ապշեցրեց մի հանգամանք—տնակի բոլոր լուսամուտները բաց էին, բաց էր և դուռը: Եւ էմքի առջև թափուած էին ինչ-որ թղթի կտորներ: Պառն ետեւից աւելը ձեռքին յայտնուեցաւ աղախինը:

Նս մօտեցայ նրան...

— Պնացին,—դուրս շարտեց նա յանկարծ, մինչև որ ես կը հարցնէի թէ՛ տանն է Պաղինը:

— Պնացի՞ն... կրկնեցի ես... Ի՞նչպէս թէ զնացին: Ուր:

— Այսօր առաւօտեան ժամի վեցին գնացին և չ'ասացին թէ ուր: Բայց սպասէք, դուք, կարծեմ, պարոն Ն. էք:

— Այո՛, ես պարոն Ն. եմ:

Ձեր անունով նամակ կայ տանտիկնոջ մօտ:

Աղախինը գնաց վերև և նամակը ձեռքին վերադարձաւ:—Ահա, համեցէք:

— Բայց այդ անկարելի է... Այդ ի՞նչպէս նրանք... սկսեցի ես: Աղախինը մի բուժ հայեացք ձգեց վերաս և սկսեց աւելել:

Նամակը Պաղինիցն էր: Ասեայի կողմից ոչ մի տող չկար: Նամակն սկսվում էր նրանով, որ Պաղինը խնդրում էր ինձ չը նեղանալ նրանից այդպէս անակնկալ կերպով հեռանալու համար: Նա համոզուած էր, որ ես խոհամտութեամբ նայելով այդ բանի վերայ, հաւանութիւն կ'տայի նրա որոշմանը: Նա ոչ մի ելք չէր գտնում ազատուելու այդ գրութիւն

նից, օրը վերջ ի վերջոյ կարող էր դժուարին և վտանգաւոր կերպարանք ստանալ:—Արեկ զիշեր, գրում էր նա, մինչև որ մենք երկուսս էլ լուռ ու մունջ նստած սպասում էինք Ասեային, ես վերջնականապէս համոզուեցի, որ մեզ անհրաժեշտ է բաժանուել: Սան մի քանի նախապաշարմունքներ, որոնց ես յարգում եմ, ես հասկանում եմ, որ դուք չէք կարող Ասեայի հետ ամուսնանալ: Նա ինձ բոլորը պատմեց: Նրան հանդարտեցնելու համար, ես պէտք է զեջանէի նրա կրկնակի և թախանձագին խնդրանքներին:—Նամակի վերջում նա ցաւակցութիւն էր յայտնում, որ մեր ծանօթութիւնն այսպէս շուտով ընդհատուեց, ցանկանում էր ինձ բաղձաւորութիւն, մտերմաբար սեղմում էր ձեռքս և աղաչում էր, որ ես չ'աշխատեմ նրանց որոնելու:

«Ի՞նչ նախապաշարմունքներ»,—գոռացի ես, կարծես թէ նա կարող էր ինձ լսել:—Ի՞նչ դատարկաբանութիւն: Ո՞վ նրան իրաւունք տուաւ յափշտակելու Ասեային իմ ձեռքից»... Նս ամուր բռնեցի մազերիցս...

Աղախինն սկսեց բարձրաձայն կանչել տանտիկնոջը: Նրա երկիւղն ինձ ուշքի բերեց: Իմ մէջ բոցավառուեց մի միտք, այն է՝ գանել նրանց, ինչ էլ որ լինի, գանել նրանց: Տանել այդ հարուածը, հաշտուել այդպիսի մի վախճանի հետ—անկարելի էր: Տանտիկնոջից իմացայ, որ նրանք ժամի վեցին շողնաւ էին նստել և Քէյնի վերայով ձանապարհուել էին դէպի ներքև: Նս գնացի շողնաւային գրասենեակը. այնտեղ ինձ ասացին, որ նրանք տոմսակ են վերցրել մինչև Աեոլ'ն: Նս շտապեցի դէպի տուն այն դիտաւորութեամբ, որ իսկոյն պատրաստուեմ և շողնաւ նստելով՝ գնամ նրանց ետեւից: Այնպէս պատահեց, որ ես անցայ Պրաու Աուիզէի տան մօտով... Յանկարծ լսում եմ, ով-որ կանչում է ինձ: Պլուխս վեր բարձրացրի և հէնց այն սենեակի լուսամուտում, որտեղ մի օր առաջ տեսնուել էի Ասեայի հետ, ես տեսայ քաղաքապետի որբեւայրուն: Նա ժպտում էր իւր զզուելի ժպիտով և ինձ կոչում էր իւր մօտ: Նս երեսս շուռ տուի և ուզեցի անցնել, բայց նա յետեւիցս կանչեց, ասելով որ մի բան ունի ինձ տալու: Այդ խօսքերը ստիպեցին ինձ կանգ առնել և ես ներս մտայ նրա տու-

նր: Ինչպէ՛ս արտայայտել իմ զգացածը, երբ ես նորից տեսայ այդ փոքրիկ սենեակը:...

— Եթէ արդար դատելու լինենք, ասաց նա, ցոյց տալով ինձ մի փոքրիկ նամակ,—ես այս բանը պէտք է յանձնէի ձեզ այն ժամանակ միայն, եթէ դուք ինքներդ մտնէիք ինձ մօտ, բայց ոչինչ, դուք մի շատ պատուական երիտասարդ էք: Եռէք:

Ես վերցրի նամակը:

Մի փոքրիկ թղթի կտորի վերայ մատիտով շուտափոյթ գրուած էին հետեւեալ խօսքերը:...

«Մնաք բարեաւ. մենք այլ ևս չենք տեսնուիլ: Հպարտութիւնից չէ, որ ես հեռանում եմ—ոչ ես այլ կերպ վարուել չէի կարող: Երէկ, երբ ես արտասվում էի ձեր առջև, եթէ դուք ինձ մի՛ խօսք, միմիայն մի՛ խօսք ասէիք—ես կը մնայի: Դուք չ'ասացիք այդ խօսքը: Երևի, այդպէս աւելի լաւ էր:... Մնաք բարեաւ յաւիտեան»:

Մի՛ խօսք... Օ՛, որքան անմիտ եմ ես: Եյդ խօսքը... այդ խօսքը մի օր առաջ ես արտասուելով կրկնում էի. ես նրան քամուն էի տալիս. ես նրան անդադար յիշում, արտասանում էի ամայի դաշտերում:... բայց ես այդ խօսքը չ'ասացի նրան, չ'ասացի, թէ սիրում եմ քեզ... Մակայն այն ժամանակ ես չէի կարող այդ խօսքն արտասանել: Եյն միջոցին, երբ ես պատահեցայ նրան այն սոսկալի սենեակում, իմ մէջ զիւ զարթած սիրոյս պարզ զիտակցութիւնը: Նա չը զարթեց մինչև անգամ և՛ այն ժամանակ, երբ ես մի անխորհուրդ և ծանրագին լուրթիւնից կաշկանդուած՝ նստած էի նրա եղբոր հետ... Եյդ զիտակցութիւնն անզիմադրելի ուժով բռնցիկեց մի քանի բոպէից յետոյ միայն, երբ ես վախենալով, որ անբաղդութիւնը կարող է տեղե ունենալ սկսեցի փնտռել Նսեային, կանչել նրան, բայց այն ժամանակ—արդէն ուշ էր: «Ո՛չ, այդ անկարելի է»,—կասեն ինձ: Չը գիտեմ, կարելի է թէ ոչ—բայց զիտեմ, որ այդ ճշմարտութիւն է: Նսեան չէր հեռանալ, եթէ նրա զրութիւնը կեղծ ու խաբուսիկ չը լինէր, եթէ նրա մէջ նկատուելիս լինէր գէթ նշոյլ ուրիշներին դուր գալու ցանկութեան: Նա չը կարողացաւ տանել այն, ինչ որ ուրիշ ամեն մի կին կարող էր տանել: Ես այդ չը հասկացայ: Վերջին

անգամ, խաւար պատուհանի մօտ Պագինի հետ տեսնուելու ժամանակ, ես չը խոստովանեցի նրան բոլորը—չար հրեշտակս փակեց իմ շրթունքները, և այն միակ թելը, որից բռնած՝ զիւ կարող էի ես պահպանուել, դուրս սահեց ձեռքիս միջեց:

Հէնց նոյն օրը ես ճամբուելս իրերով լրացրած՝ վերադարձայ Լ. քաղաքը և ճանապարհ ընկայ գէպի Սեօլ՛ն: Յիշում եմ, երբ շոգեհաւն արդէն հեռանում էր ափից և ես մտքով մտաք բարև էի ասում այն փողոցներին ու այն բոլոր վայրերին, որոնց ես երբէք չը պէտք է մոռանայի, այդ բոպէին յանկարծ աչքովս ընկաւ Պաննիսէնը: Նա նստած էր ափի մօտ, նստարանի վերայ: Նրա դէմքը գունատ էր, բայց ոչ տխուր: Նրա կողքին կանգնած էր մի գեղեցկատեսիլ երիտասարդ և ծիծաղելով՝ ինչոր պատմում էր նրան: Իսկ Բէյնի միւս եղբրբում, հին հացածառի մուգ կանաչե միջեց տխուր ու տրտում շարունակ նայում էր իմ փոքրիկ Մադոննան:

Խ.

Սեօլ՛նում ես տեղեկացայ, որ նրանք գնացել են Լժնգոն: Իսկոյն յետեւեցի նրանց: — Բայց Լժնգոնում արած իմ բոլոր խուզարկութիւնները ապարդիւն անցան: Ես երկար չէի կամենում հնազանդուել, երկար զիմադրում էի, բայց վերջ ի վերջոյ պէտք է սրտիցս հանէի նրանց գտնելու յոյսը:

Եւ ես այլ ևս չը տեսայ նրանց—ես չը տեսայ Նսեային: Անորոշ լուրեր էին հասնում ինձ նրա մասին, բայց նա յաւիտեան անյայտացաւ ինձ համար: Ես մինչև անգամ չը զիտեմ կենդանի է նա տակաւին: Վանի մի տարի անցնելուց յետոյ, մի անգամ, արտասահմանում, երկաթուղու վագօնի մէջ աչքովս ընկաւ մի կին, որի դէմքը կենդանի յիշեցրեց ինձ անմոռանալի կերպարանքի բոլոր գծերը... բայց ես, երևի, խաբուած էի պատահական նմանութեամբ: Նսեան իմ յիշողութեան մէջ մնաց միեւնոյն մատաղհաս աղջիկը, ինչպէս որ ես նրան ճանաչել էի կանաչիս ամենագեղեցիկ շրջանում, ինչպէս որ ես նրան տեսայ վերջին անգամ, երբ նա յենուած էր փայտե ցածր աթոռի մէջքին:

Սակայն, պէտք է խոստովանած, որ ես այնքան էլ երկար չը տխրեցի նրա մասին: Այս մինչև անգամ այն եղբակացութեան եկայ, որ բաղդը լաւ էր կարգադրել, չը կապելով ինձ Ասեայի հետ: Ինձ միտթարում էր այն միտքը, որ ես, երեւի, բաղդաւոր չէի լինել այդպիսի մի ամուսնու հետ: Այն ժամանակ ես երիտասարդ էի և ապագան, այդ կարծատե և թռուցիկ ապագան, ինձ թուում էր անվերջ, անսահման: Միթէ միևնոյնը չէ կարող կրկնուել դարձեալ, մտածում էի ես,— և կրկնուել աւելի լաւ, աւելի զեղեցիկ կերպով... Ինձ ծանօթ էին և՛ ուրիշ կանայք, սակայն այն զգացմունքը, որ յարուցել էր իմ մէջ Ասեան—այն այրող, քնքոյշ և խորին զգացմունքը — այլ ևս չը կրկնուէր: Ոչ մի աչքեր չփոխարինեցին ինձ համար այն աչքերին, որոնք մի ժամանակ սիրալիր յառած էին վերաս, ոչ մի սրտին, որ սեղմուել էր կրծքիս, այնպիսի ուրախ և քաղցր ինքնամոռացութեամբ չը պատասխանէր իմ սիրտը: Այլ այդպէս ես զուրկ ընտանիքից, դատապարտուած անտիրունչ միայնակեցութեան, անցուցանում եմ իմ օրերը տարիները: Սակայն, որպէս սրբութիւն, ես պահպանում եմ նրա նամակները և խորզենու չորացած ծաղիկը, այն ծաղիկը, որ նա մի ժամանակ լուսամուտից նետեց ինձ: Մինչև օրս էլ նա արձակում է մի թոյլ բուրմունք, իսկ այն ձեռքը, որ այդ ծաղիկը տուաւ ինձ, այն ձեռքը, որը ես մի անգամ միայն կարողացայ սեղմել իմ շրթունքներին, այն ձեռքը, զուցէ, վաղուց արդէն փտում է գերեզմանի մէջ... Իսկ ես ի՞նչս—ի՞նչ դարձայ ես ինչս: Ի՞նչ մնաց ինձանից, իմ այն երջանիկ և աղմկայոյղ օրերից, իմ այն թեաւոր յոյսերից և ձգտումներից: Այսպէս ահա մի չնչին խոտիկի թեթեւ շողիացումն աւելի է երկարատեում, քան թէ մարդու զոյութեան ընթացքը, երկարատեում է՝ վկայ հանդիսանալով նրա բոլոր ուրախութիւններին ու վշտերին, վկայ հանդիսանալով մարդուս նոյն իսկ ամբողջ կեանքին և մահուան:

ՎԵՐՋ

1939 Դ.  
P. ANT NO 26/77  
ԴԿՈՒԵ

ՀՍՍՐ-ԱՅՍ ԵՍՐ  
Մ. Ա. ՄԱՇԿԵԱՆ  
ՄՍԽԻՍՏԱՆԻ ԳՆԱԿԱՆ

2013

